Azg
armenian daily

11 ՅՈՒԼԻՍ 1998 ՇԱԲԱԹ #125 (1628)

Քենթրբերիի արեմիսկոպոսը Լորդերի պալատի առնչությամբ ոչինչ չի խոստացել

ԵՐԵՎԱՆ, 10 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ - ԱՄԵՐԻԿԱՅԻ ՁԱՅՆ: Պոլսի հայոց պատրիարքության «Լրաբեր» պարբերականը տեղեկացրել է Քենթրբերիի արեմիսկոպոսի ներկայացուցիչ Շերվուդից ստացված հաղորդագրության մասին, որում ասվում է, թե վերջերս որոշ թերթերում սխալ տեղեկություններ են հրապարակվել Քենթրբերիի արեմիսկոպոսի մասին: Ըստ ներկայացուցչի, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն մի մասնավոր հանդիպման ժամանակ արեմիսկոպոսին հարցրել է, թե Անգլիայի Լորդերի պալատում ինչ կարելի է անել Հայոց ցեղասպանության կապակցությամբ: Արեմիսկոպոսը որոշ զրավոր տեղեկություններ պահանջելով, պատասխանել է, թե հնարավորության դեպքում կօգնի: Այս մասնավոր խոսակցությունը տպագրվել է հաջորդ օրը: Շերվուդը շեշտել է, որ Քենթրբերիի արեմիսկոպոսը Լորդերի պալատի առնչությամբ ոչինչ չի խոստացել:

ԹԱԼԱՆ

Այրում. Կալանված գնացք

Սահմանում օրենքը յուրովի են ընկալում

ԱՐԻՄ ՂԱԶԱՐՅԱՆ

Հուլիսի 10-ին հանրապետության երկաթուղու համակարգը արձանագրեց արտակարգ դեպք: Ճիշտ է «համակարգ» հասկացությունը մեր պայմաններում խիստ չափազանցված է. շուրջ մեկ տարի է, ինչ գործում է ընդամենը մեկ մարդատար (8 վագոնանոց) գնացք Երեւան-Թբիլիսի-Երեւան ուղղությամբ: Երեկ այդ գնացքը վերադարձի ճանապարհին 2 ժամ 20 րոպե շեղվեց իր ժամանակացույցից. պատճառը տեխնիկական բնույթի չէր, ինչպես եւ կապված չէր բնական որեւէ աղետի (օրինակ սողքի) հետ: Աղետը մարդածին էր. պայմանավորված հայաստանցի սահմանապահների մի խմբի գործունեությամբ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացին առավել անպաշտպան եւ տկար է դառնում հայրենիք մուտք գործելուն պես: Սրանում եւս մեկ անգամ համոզվեցինք Այրում սահմանակետային կայարանում, երբ որպես ուղեւոր վերադառնում էինք մայրաքաղաք: Հղփացած սահմանապահները (ավելի ճիշտ, տվյալ խումբը) մուտք էին գործում վագոններ եւ առանձին կուպեներ այնպես, ինչպես ախտոռավայրի պարետը կմտներ առավել ասելի 'բանտախուց: Մարդահաշիվ չկար. գնացքի պետն անգամ իրենց կողմից ընկալվում էր որպես ուղեւոր:



Յուրաքանչյուր ուղեւոր ի սկզբանե կասկածյալ էր. ուստի եւ նման ենթադրական հիմքի վրա էր դրված համապատասխան վերաբերմունքը: Լավագույն դեպքում կուլտ եւ ինքնավստահ «հումորից» երկու խոսք: Արտահայտությունների եւ գործելակերպի բացահայտ կամայականություն: Բիրտ ուժի իշխանություն: «Հարգանք» հասկացության իսպառ եւ պաթոլոգիկ բացակայություն:

Օրենքը սահմանում ընկալվում է յուրովի. դա այն մեխանիզմն է, որի ուժով (կարեւոր չէ անգամ օրենքին ծանոթ լինելը) նման կատարածները կարող են առգրավել ինչ ցանկանան: Ուղեւորներին պատճառվող նյութա-բարոյական վնասի չափերը դժվար է գնահատել:

Տես էջ 2

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Արկադի Ղուկասյան. «Հավասարակշռության խախտումը կարող է հանգեցնել պատերազմի»

ԵՐԵՎԱՆ, 10 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ - ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ: «Ղարաբաղի հակամարտության լուծման հասնելու համար պետք է հաշվի առնել ստեղծված իրավիճակը, այսինքն՝ պատերազմի արդյունքը եւ ԼՂՀ-ի փաստացի անկախությունը: Մինչդեռ Ադրբեջանը, համարելով, թե Ղարաբաղը իր տարածքի մի մասն է, Ղարաբաղին ինքնավարություն շնորհելու ցանկությունը համարում է իբրեւ իր կողմից մեզ արված մի զիջում, այն դեպքում, երբ դա մեզ համար նշանակում է պարտություն», ֆրանսիական «Մարիան» շաբաթաթերթին տված հարցազրույցում ասել է ԼՂՀ նախագահ Ա. Ղուկասյանը:

Ըստ Ղուկասյանի, այժմ կողմերի միջեւ առկա է ռազմական հավասարակշռություն, բայց եթե Ղարաբաղը, հետեւելով ԵԱՀԿ առաջարկին, հանձնի գրված տարածքները, ապա այդ հավասարակշռությունը կխախտվի եւ ցանկացած առիթ կարող է հանգեցնել պատերազմի:

Նշելով, որ Ղարաբաղի խնդիրը Հայ դատի մի մասն է կազմում, Ղուկասյանն ասել է, որ Ցեղասպանության ու Ղարաբաղի խնդիրները նույնն են՝ այն տարբերությամբ միայն, որ եթե Ղարաբաղում այսօր էլ հայեր են ապրում, ապա Թուրքիայում նրանք այլեւս չկան: «Եվ եթե այսօր հնարավոր է մի լուծում գտնել Ղարաբաղի հարցում, ապա հայ-թուրքական խնդրի լուծումը ավելի բարդ է: Բոլոր դեպքերում Ղարաբաղի անկախության ճանաչումը կարող է օգնել Հայաստանի, Թուրքիայի եւ Ադրբեջանի հարաբերությունների բնականոնացմանը», ասել է ԼՂՀ նախագահը:

«Ղարաբաղը չի մտածում Ադրբեջանի կազմ վերադառնալու մասին»

ԵՐԵՎԱՆ, 10 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ - ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ: «Չնայած բոլոր դժվարություններին ոչ ԼՂՀ բնակչությունը եւ ոչ նրա ղեկավարությունը չեն մտածում Ադրբեջանի կազմ վերադառնալու մասին», գրված է բելգիական ֆրանսալեզու «Լը Սուար» թերթի Ստեփանակերտի թղթակցի հոդվածում: Իբրեւ խորհրդանշան անկախ ապրելու այդ ցանկության, թղթակիցը հիշատակում է Լաչինում կառուցվող եկեղեցին, մի տարածք, որը ինչպես եւ Քելբաջարը, ենթակա չէ սակարկության եւ բանակը պատրաստ է կռվելու դրանց պաշտպանության համար: Ղարաբաղի ղեկավարության հետ ունեցած իր հանդիպումներից թղթակիցը եզրակացրել է նաեւ, թե անհավանական չէ Ադրբեջանի կողմից հակամարտության վերսկսումը: ԼՂՀ պաշտպանության նախարար Ս. Բաբայանն ասել է, թե դա կարող է տեղի ունենալ միայն նախագահական ընտրություններից հետո, ըստ նախարարի կանխատեսման երեւի 1999 թ. գարնանը:

ԱՄՆ-ը կողմ է կասպիական նավթի փոխադրման բազմատարբերակ համակարգին

ԲԱՔՈՒ, 10 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ - ANS-PRESS: ԱՄՆ վարչակազմը կողմ է Կասպիականի օրքանից դեպի համաշխարհային շուկաներ նավթի եւ գազի փոխադրման բազմատարբերակ համակարգին, սակայն գտնում է, որ «Արեւելք-Արեւմուտք էներգետիկական միջանցքի» հիմնական արտահանական խողովակաշարը պետք է անցնի Բաքու-Ջեյհան երթուղով: Այս մասին Կոնգրեսի ունկնդրումների ժամանակ հայտարարել են նորանկախ պետությունների գործերում ԱՄՆ պետքարտուղարի խորհրդական Ստեֆեն Մեսսանովիչը եւ եվրոպայի եւ Կանադայի գործերի առնչությամբ պետքարտուղարի օգնական Մարկ Գրոսմանը:

«Մենք ենթադրում ենք, որ Արեւելք-Արեւմուտք տնտեսապես արդարացված միջանցքը պետք է կայանա Բաքու-Ջեյհան նավթամուղից, զուգահեռ գազամուղից, որը կծգվի դեպի թուրքական շուկաներ եւ հետո, ինչպես նաեւ անդրկասպյան գազ եւ նավթաբերներից», հաղորդել է Մեսսանովիչը: Ըստ նրա, միանգամից խողովակաշարի մի քանի երթուղիների պաշտպանությունը, այդ թվում եւ Ռուսաստանով, ունի նույնքան կարեւոր նշանակություն, ինչպես ԱՄՆ քաղաքականության ցանկացած այլ ասպեկտ, որ «ուղղված է Կասպիցի ավազանի պետությունների տնտեսական ինքնիշխանության եւ անկախության ամրապնդմանը»:

ՀԱՄԱՌՈՏ

Փոփոխություն «Հայաստանի» հոգաբարձուների խորհրդի կազմում

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը հուլիսի 10-ին հրամանագիր է ստորագրել, ըստ որի «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդում Վալիկ Ղարաբեգյանի փոխարեն ընդգրկվել է «Հայ Ցեղափոխական Դաշնակցություն» հասարակական-քաղաքական կազմակերպության ներկայացուցիչ Վաղարշ Էհրամջյանը: ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՄՈՒԼ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատի շենքը՝ ռուսական բանկին

ԵՐԵՎԱՆ, 10 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատի շենքը, ըստ ՀՀ արդարադատության նախարարության հասարակական եւ քաղաքական կազմակերպությունների գրանցման վարչության պետ Էդիկ Մարգարյանի, սեփականաշնորհվել է տնօրենի կողմից եւ վաճառվել ռուսական բանկերից մեկին: Ըստ «Նոյյան տապանի» տեղեկությունների, այդ բանկը Ռիա-բանկն է:

Երկրաշարժից նշանակալի վնաս Ադրբեջանին

ԲԱՔՈՒ, 10 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ - ANS-PRESS: Հուլիսի 9-ին տեղական ժամանակով 19.19 Թալիշի լեռներում, Իրանի հետ սահմանին, Բաքվից 240 կմ հարավ տեղի է ունեցել մոտ 7 բալ ուժգնության երկրաշարժ: Տարերային աղետի էպիկենտրոնը գտնվել է Լերիկ-Յարդիմլինի գոտում: Տեղի բնակչությանը հասցվել է նշանակալի վնաս: Փլվածքների հետեւանքով փակ են լեռնային ճանապարհները, առաջացել են երկրակեղեւի ճեղքվածքներ: Հաղորդումներ մարդկային զոհերի մասին առայժմ չկան:

Տեղերում ձեւավորվում են փրկարարական խմբեր տեղի գործադիր իշխանությունների եւ քաղաքացիական պաշտպանության շտաբների շրջանային բաժանմունքների անդամներից: Ստեղծվել է կառավարական հանձնաժողով, որին հանձնարարված է որոշել տարերային աղետի ճշգրիտ մասշտաբները եւ վնասի չափերը:

ԿՈՆՅԱԿ-ԲՐԵՆԴԻ

«Հայաստանյան կառավարությունը հուսահատված եւ զղջացող չի՛ լինելու»

Անվարան պնդեց «Պեռնո Ռիկար» խմբի փոխնախագահ Էրիկ դը Պոնսին

ՆԱՐԻՆԵ ԳԻԼԲԱՐՅԱՆ

Կոնյակի (այսուհետ արդեն Բրենդիի) գործարանի համտեսման բազմախոստում սրահում երեկ «Պեռնո Ռիկար» խմբի հայաստանյան երեք ղեկավարները կլոր սեղանի շուրջ հավաքեցին հայ լրագրողներին ներկայացնելով իրենց ծրագրերն ու մեկ ամսում կատարված աշխատանքը: «Պեռնո Ռիկար» խմբի ծրագրերի գծով փոխնախագահ եւ գնումների պատասխանատու էրիկ դը Պոնսին ներկայացրեց Երեւանի Բրենդիի գործարանի գլխավոր տնօրեն Ժան Ֆրանսուա Ռուկուին եւ Հրանտ Բագրատյանին գործադիր խորհրդի փոխնախագահի պաշտոնում. կանխավ զգուշացնելով, թե որն Բագրատյանի հետ ծանոթացել է ընդամենը 1 ամիս առաջ: Հ. Բագրատյանի առաքելությունն է աջակցել «Պեռնո Ռիկար»-ին ըմբռնելու հայկական մտածելակերպի «նրբություններն ու հմայքը»: Ավելի ուշ որն Բագրատյանը նշեց, թե իրեն առաջարկվել է նախագահի պաշտոն, սակայն ինքը չի համաձայնել կամենալով իբրեւ փոխնախագահ օգնել ֆրանսիացիներին հայկական

տնտեսական միջավայրում հաստատվելու: Նախկին վարչապետը գոհունակությամբ նշեց, թե Կոնյակի գործարանի միջազգային մրցույթով վաճառքի ձգձգումն արդարացված էր, քանզի 94-96 թթ. այդ գործարանի համար մենք չէինք կարողանա ստանալ անգամ 30 մլն դոլար:

Էրիկ դը Պոնսին ողջունեց ՀՀ կառավարության վճռականությունը, մինչեւ վերջ հասցնելու այնպիսի մի պատասխանատու գործ, ինչպիսին սնվականաշնորհումն է: Նա անձամբ մեր կառավարության հետ մասնակցել է վերջին վեցամսյա բանակցություններին եւ խիզախ գործադիր իշխանությանը կամեցավ բարություն ու երկարակեցություն:

Տես էջ 2

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՄԱՄՈՒԼ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՖՈՐՈՒՄ»

Երրորդ հասկած՝ փողեր լվանալու միջո՞ց, թե՞ ժողովրդավարության չափանիշ

«Քաղաքացիական ֆորում-1998» ծրագրի հերթական միջոցառումը «Հասարակական կազմակերպությունները Հայաստանում» թեմայով անցկացրեց ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության եւ իրավունքի ինստիտուտի տնօրեն, ՄԱԿ-ի ազգային փորձագետ Գեւորգ Պողոսյանը: Պրն Պողոսյանը, կոչ անելով հասարակական երրորդ սեկտորը (հասվածը) չփոթել երրորդ իշխանության հետ, հասարակական շարժումը նոր սոցիալական երեւույթ եւ Հայաստանում ժողովրդավարության հաստատման ցուցանիշ համարեց, ներկայացնելով ժամանակակից հասարակության դասակարգման միջազգային փորձը: Ըստ այդմ, հասարակությունը բաժանվում է երեք հասվածի՝ պետություն (իշխանություն), գործարարություն (բիզնես) եւ հասարակական կազմակերպություններ: Այդ հասվածների հարաբերակցությունը որոշում է հասարակության զարգացածության (ժողովրդավարության) աստիճանը (զարգացած երկրներում երրորդ հասվածը բավականաչափ ազդեցիկ է):

Հայաստանում հասարակությունը զարգանում է ոչ ստանդարտ ճանապարհով եւ այդ տեսակետից հետաքրքրություն է ներկայացնում հետազոտողների համար: Ի տարբերություն այլ երկրների, մեր երկրում վերոհիշյալ հասվածները միաժամանակ են կայանում: Այս պահին երրորդ հասվածը զարգացման ճանապարհին է՝ ճիշտ այնպես, ինչպես կայացման ճանապարհին է չորրորդ իշխանությունը՝ մամուլը: Այսօր Հայաստանում գործում են 1700 գրանցված ՀԿ-ներ, որոնց թիվն ըստ կանխատեսումների, տարեվերջին կհասնի 2000-ի: Համեմատության համար ասենք, որ Վրաստանում գործում են 3775, Ադրբեջանում մոտ 300 ՀԿ-ներ: Հասարակական շարժումը Հայաստանում սկսվել է հիմնականում 1998 թ.-ից եւ զարգացել տարբեր միջազգային ֆորումների «կազդուրիչ» ազդեցության տակ, սկզբում առավելապես մարդու իրավունքներով, ավելի ուշ՝ կանանց, եւ համեմատաբար վերջերս փախստականների եւ միգրացիայի հարցերով զբաղվող ՀԿ-ների ձեւով: Դրանց գրեթե 25 տոկոսն իրականում գործող է, մյուսները ձեւացնում են, թե աշխատում են, որոշ մասն էլ երկու-երեք հոգի է հաշվում: ՀԿ-ների ստեղծման առումով առաջատարի դիրքերում են կանայք (52 տոկոս):

Պրն Պողոսյանը հասարակական շարժումը բաժանեց ըստ մակարդակների՝ տեղական (հանրապետական) շրջանակում գործող «անհատական կազմակերպություններ՝ տարածաշրջանային ընդգրկում ունեցող ՀԿ-ներ եւ վերջապես՝ միջազգային ասպարեզ ելած կազմակերպություններ: Վերջիններս, ըստ նրա, որոշում են, թե որքանով զարգացած է երրորդ հասվածը եւ ինչպիսի ապագա ունի, քանզի ինչպես հնարավոր չէ բարձրակարգ վարորդ դառնալ Երեւան-Գառնի խճուղու վրա, այնպես էլ հնարավոր չէ լուրջ կազմակերպություն դառնալ առանց միջազգային կազմակերպությունների հետ շփվելու:

ՀԿ-ների՝ դասակարգելով նաեւ ըստ իշխանությունների հետ փոխհարաբերությունների (ՀԿ-ներ, որ տարանջատվում, հաճախ հակադրվում են իշխանություններին, ուրիշներ, որ համագործակցում են իշխանությունների հետ, եւ կազմակերպություններ, որ ստեղծվել են հենց իշխանությունների կողմից) բանախոսն անցավ ՀԿ-ների ֆինանսավորման զգայուն թեմային: Վերջինիս հիմնական աղբյուրը, բնականաբար, արտասահմանյան գրանտային ներարկումներն են: Պրն Պողոսյանի կարծիքով, «անցումային շրջանի անցումային ոչ նորմալ երեւույթ», որ կարելի է կանխել, եթե ՀԿ-ների հովանավորությունը ստանձնի երկրորդ (բիզնես) սեկտորը, պետությունը նույնպես պիտի աջակցի ա-ռողջ հասարակական սեկտորի զարգացմանը: Քանզի «երեք հասվածների համագործակցությունն է, որ կարող է աղահովել հասարակության բնականոն զարգացումը»:

Սինչդեռ, ինչպես նկատեցին ունկնդիրներից ոմանք, պետությունը ոչ միայն չի աջակցում ՀԿ-ներին, այլեւ խանգարում է նրանց, առանց հաշվի առնելու, որ քաղաքակիրթ հասարակության ստեղծման նախադայմանը հասարակական սեկտորի զարգացումն է: Ի հաշիվ պետության թուլացման: Ի դեպ, ասվածին համակարծիք չէր հայտնի ծայրահեղական Աղասի Արզակյանը, որի կարծիքով «ՀԿ-ներն ավելի շուտ փողեր լվանալու միջոց են» կամ իրականացնում են օտարերկրյա հետախուզական գործակալությունների պատվերները:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ



Այրում. Կալանված գնացք

Սկիզբը էջ 1

Ինչպիսի՞ն էր մախային ծառայության կարգավիճակը խիստ համեստ եւ մեկուսացված: Բնական սուղումներ (դուռը թակելով եւ հաճախ բարեհամբույր) եւ համապատասխան եզրակացություններ: Եզրակացություններ, որոնք ոչինչ չեն նշանակում նրանց հաջորդող «սահմանապահների» համար: Առգրավվում է այն ապրանքը, որը մախային ծառայողների կողմից (մեկ տոպե առաջ) կնքված փաստաթղթերում ճանաչվում էր թույլատրելի, երկու բլոկ սիգարետ, 2 շիշ օղի եւ այլն: Հակառակ դեպքում «մուծվեք»:

«Սա զայրացուցիչ դեպք է, որի նմանները արձանագրվում են շաբաթը մեկ», ասում է Վրաստանում Հայաստանի երկաթգծի ներկայացուցիչ պարոն Սեհրաբյանը, գնացքը գործում է շուրջ մեկ տարի եւ սահմանապահների նման գործունեության հետեւանքով կորցրել է իր ուղեւորների կեսից ավելին: Ոչ ոք չի համարձակվում գնացք նստել: Բացի այդ, խիստ ընկնում է մեր այս միակ երկաթուղային փոխադրամիջոցի վարկը ժամանակացույցից եղվելու գլխավոր պատճառը նման «սուղումներն են», եւ Թբիլիսիում մեր դեսպան Լեւոն Խաչատրյանի հաստատմամբ բազմիցս ստացվել են բողոքներ այդ կապակցությամբ: Հնարավոր չէ աշխատել»:

Նման կարծիքի են նաեւ այլ երկաթուղայիններ: Ինչ վերաբերում է սովորական ուղեւորներին, ապա «սահմանապահների» գործելակերպը այնպիսի ատելություն էր ներարկել նրանց մեջ, որ ոմանք համաձայն էին ջարդել (եւ ջարդում էին) իրենց մեկ-երկու օղու շիշը, միայն թե ապրանքը չընկնի «օտարների» ձեռքը:

Քանի դեռ գնացքը կամայական վճռով 2 ժամով կանգնեցված էր, փորձեցինք որոշ պարզաբանումներ ստանալ տեղամասի մախային ծառայության պետից: սակայն խեղճ մախավորները կողք-կողքի նստած խոստովանեցին իրենց անտեղյակությունը (տվյալ դեպքում անգորությունը) ցույց տալով գիշերային հեռուն, որտեղ սահմանապահները բարձում էին առգրաված ապրանքները:

Ներկայացնելով «Ազգ»-ի վկայությունը, փորձեցի նրանցից պարզել կատարվածը: Պարզվեց միայն, որ այդ «սահմանապահ» կոչվածները անընդունակ արարածներ են ինչպես օրենք հասկանալու, այնպես էլ վիճելու պարագաներում. «Ախպեր, քեզ ընկերական ասում ենք գնա», կամ «սա էլ մեր լավության դիմաց, որ քեզ բան չասինք» եւ այլն, եւ այլն: Նրանց «օրինապաշտության» գերագույն դրսեւորումը այն էր, որ «մենք առգրավում ենք այն սկզբունքներով, որոնք գրված են Սահմանադրության մեջ»: Բնական է, որ վեճը անխուսափելի էր: Անխուսափելի նաեւ այն պատճառով, որ չի գործում օրենքի ոչ մի դրույթ: Եվ եթե միայն այդ «սահմանապահ» կոչվածները չեն հեռացնվելու օրենքով եւ չի վերահսկվելու նրանց գործելակերպը, ապա իրոք լավ է նստել մի հեծանիվ եւ ընդմիշտ փախչել այս երկրից: Հակառակ դեպքում Հայաստանում հանցագործ կդառնա յուրաքանչյուր ոք, ով կպաշտպանի իր արժանապատվությունը: Ես, բարեբախտաբար արդեն հանցագործ եմ: Սահմանադրության դրույթների համաձայն, ինձ փնտրեք «Ազգ»-ում:

ԵՐԵՎԱՆ

Մամուլի ներկայացուցիչների խորհրդակցություն կրթության եւ գիտության նախարարի մոտ

Երեկ մի շարք թերթերի խմբագիրներ եւ ներկայացուցիչներ խորհրդակցության էին հրավիրված ՀՀ կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանի մոտ: Խորհրդակցության թեման ընդգրկում էր ոչ միայն առաջիկա ընդունելության քննությունների կազմակերպման հարցերը, այլեւ առհասարակ ազգային կրթության հայեցակարգերի, խնդիրների, նոր օրենքի նախագծի ու հարակից պարագաները: Հետաքրքրական խոսակցություն ծավալվեց հասկապես նախարարության կառուցվածքային փոփոխությունների, մասնավոր բուհերի, կրթության մասին նոր օրենքի նախագծի գլխավոր դրույթների մասին: Պրն Մկրտչյանը բոլոր պարագաներում շեշտեց նման հարցերի քննարկումը հրապարակային, թափանցիկ դարձնելու անհրաժեշտությունը, համակարգում առկա թերությունները մամուլի կողմից պրոֆեսիոնալ ձեւով մատնանշելու, քննադատելու կարեւորությունը: Ինչ վերաբերում է առաջիկա քննություններին, բացի դիտորդ-լրագրողների մասնակցությունից, պրն նախարարը խնդրեց անձամբ խմբագիրների կամ նրանց տեղակալների ներկայությունը քննության արդյունքների ստուգման աշխատանքներին:

Կրթության նախարարությունը ձգտում է աշխատել իսկապես թափանցիկ:

«Հայաստանյան կառավարությունը հուսահատված եւ զոջացող չի՛ լինելու»

Սկիզբը էջ 1

Կարեւոր փաստեր եւ թվեր

«Պեռնո Ռիկար» խումբը ներկայացրեց իր այցեքարտը, համաձայն որի 97 թ. Ֆրանսիայում գինիների եւ սպիրտային խմիչքների իրենց արտադրությունն ու վաճառքը կազմել է 15 տոկոս, արտերկրում՝ 32 տոկոս, ոչ ալկոհոլային խմիչքներինը՝ Ֆրանսիայում 16 տոկոս, արտերկրում՝ 37 տոկոս: Համեմատության համար նշված էր, որ 75 թ. նույն «Պեռնոն» Ֆրանսիայում արտադրել ու իրացրել է իր գինիների եւ խմիչքների 62 տոկոսը, իսկ արտերկրում՝ ընդամենը 13 տոկոսը, ոչ ալկոհոլային խմիչքների արտադրությունը եւ սպառումը Ֆրանսիայում կազմել է 24 տոկոս, դրսում՝ միայն 1 տոկոս: Սույն թվերը վկայում են, որ «Պեռնո Ռիկար»-ը սկսել է աշխատել ի հաշիվ դրսի շուկաների եւ արտադրությունների: Այսօր խումբն ունի 12652 աշխատակից, որոնցից միայն 36 տոկոսն է Ֆրանսիայում: Ունի 76 վերամշակման կենտրոն, 27-ը՝ Ֆրանսիայում, մնացյալն՝ ամբողջ աշխարհում: Այսպիսով, «Պեռնո Ռիկար»-ը անդրազգային ընկերություն է, որն իր գործառնությունների 70 տոկոսն իրականացնում է աշխարհի տարբեր շուկաներում: Հայաստանը «Պեռնոն» ընտրել էր գիտակցված. «Հայկական մրգերի որակը չէր կարող մեր աչքից վրիպել», ժպտադեմ նշեց պրն դը Պոնսին: Ֆրանսիացի ձեռներեցների գործունեության առաջին թիրախը խաղողի գնումներն են, ապա այլ մրգերի գնումները՝ իբրեւ մրգանյութի արտադրության հիմք յոգուրտների, պաղպաղակների համար: «Պեռնո Ռիկար» խմբի միջազգային ռազմավարության անկյունաքարը, ալկոհոլային խմիչքներին զուգահեռ, մրգերի կիսաֆաբրիկատներն են: Աշխարհում «Պեռնոն» ընկերությունը մրգերի գնման գծով ազդեցիկ տեղ է գրավում: Անդրանիկ ավետիսը, որ Երեւանի կոնյակի գործարանի վաճառքից հետո հայտնեցին նոր տերերը, խաղողագործների հետ կնքվող պայմանագրերն են: «Պեռնո Ռիկար»-ը մտադիր է կիլոգրամը մոտ 100 դրամով խաղող գնել հայ գյուղացիներից՝ անսահմանափակ քանակությամբ: Հրանտ Բագրատյանը հավաստեց, թե օրինակ Արարատի եւ Արմավիրի մարզերի գյուղացիները գոհունակությամբ են ընդունել այս լուրը, քանզի նախորդ տարիներին գնման գինը եղել է ավելի ցածր, բացի այդ «Պեռնո Ռիկար»-ը պատրաստ է վճարել անմիջապես: Գնումից առաջ, Ֆրանսիացիները հատուկ լաբորատորիայի միջոցով կստուգեն շարքի պարունակությունը խաղողի տարբեր տեսակներում: Բրենդի արտադրվելու է միայն հայկական հումքից:

Ժան Ֆրանսուա Ռուկուն նշեց, թե իրենք զբաղվելու են հայկական բրենդի համար նոր շուկաներ որոնելով, այս տեսանկյունից նրանց հիմնական հույսը սփյուռքահայերն են, քանզի աշխարհի բոլոր ծագերում գտնվող հայերը, համոզված են Ֆրանսիացի սեփականատերերը, հաճույքով կխմեն հայկական բրենդի: «Պեռնո Ռիկար»-ի լուրջ խնդիրներից մեկը կեղծված կոնյակի դեմ պայքարն է: «Բրենդի» անվանումն իսպառ դուրս է մղում «կոնյակին», թեեւ կառավարության կողմից Ազգային ժողովին ներկայացված պայմանագրի տարբերակում ֆրանսիական կողմը պարտավորություն է ստանձնել պահպանել այս անվանումը: Ի պատասխան մեր հարցի, թե «Պեռնո Ռիկար»-ն այսպիսով չի՞ խախտում կնքված պայմանագիրը, դը Պոնսին դիվանագիտորեն ասաց, որ խմողի համար կարեւորը որակն է եւ ոչ անվանումը: Իսկ Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակն արդեն դիմել է Բորիս Ելցինին՝ կոնյակ անվանումը կրող խմիչքների վաճառքը ՌԴ-ում արգելելու համար: Հայ լրագրողների անհանգստությանը, թե Հայաստանում բրենդիի արտադրությունից ֆրանսիացիները մի օր կարող են անցնել յոգուրտների եւ այլ կաթնամթերքի արտադրության, «Պեռնո Ռիկար»-ի ներկայացուցիչները վկայեցին, թե դա տեղի չի ունենա, քանզի յոգուրտների արտադրությունը շահութաբեր չէ: Երեւանի գործարանի հետ մեկտեղ ֆրանսիացիների սեփականությունը դարձած երեք գործարաններում արդեն սկսվել են վերակազմավորման աշխատանքները, սակայն նրանց պարտքերի վճարումը բյուջեին, որ կազմում է 2 մլն դոլար, դեռեւս հետաձգված է: Բրենդիի գործարանում փոփոխությունները դեռ մեծ չեն, Ալբերտ Հերոյանի հեռանալուց հետո աշխատանքից ազատվել է նրա տեղակալ Ռաշիդ Մուղսուդյանը:

«Պեռնո Ռիկար»-ի անունից դը Պոնսին հավաստեց, որ մոտակա ժամկետում իրենք չեն պատրաստվում վերավաճառել գործարանը, որովհետեւ իրենք գնող-վերավաճառող չեն, այլ լուրջ արտադրող եւ իրացնող: Նա կտրականապես մերժեց նաեւ միջազգային մրցույթի ընթացքում ինչ-ինչ ապօրինի պայմանավորվածությունների հնարավորությունը: ՀՀ կառավարությունը դիմել է, իրենք արձագանքել են, կասառը բացառվում է:

«Պեռնո Ռիկար»-ը «Ազնավուր-Հայաստան» հիմնադրամին կատարում է իր առաջին նվիրատվությունը՝ իբրեւ երկրի կարիքավոր բնակչությանն օժանդակելու բարի կամքի խորհրդանշական առաջին դրսեւորում:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Խուս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրենություն / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh հարմակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՅԴ-ն փորձում է ընտրել ճիշտը եւ ոչ թե ձեռնտուն

Հուլիսի 10-ին սկսվեց ՀՅԴ հայաստանյան կազմակերպության ժողովը

«Շատ կարճ է իշխանափոխության անցած ժամանակը եւ դժվար է խոսել երկրի նվաճումների կամ կորուստների մասին: Բայց մենք տեսնում ենք շատ-շատ բաներ այնպես չեն կատարվում, ինչպես կուզենայինք: Բյուրոկրատական ապարատը, որ դեռ խորհրդային ժամանակներից է ժառանգված, այսօր կա, եւ ամեն բան անելու է, որ պահպանի իր դիրքերը, կասեցնի երկրի ժողովրդավարական ընթացքը: Բյուրոկրատական համակարգը չի կարող աղրել բաց հասարակության մեջ: Խորհրդարանական նոր ընտրություններ, որ մենք կարծում էինք, թե պետք է լինեն, չեղան, եւ դանդաղում է ընտրական օրենսգրքի ընդունումը: Կառավարության տնտեսական գործունեության մեջ դեռ գերիշխող են այն դեղատոմսերը, որոնք կարծես թե աղացուցել են իրենց առնվազն վիճելի լինելը: Վարկաբեկված տարերից Հայաստանի ազատման ոլորտը դանդաղում է, մենք չենք կարող դա չտեսնել», հավաստեց ՀՀ նախագահի խորհրդական եւ ՀՅԴ Գերագույն մարմնի անդամ Վահան Հովհաննիսյանը երեկ կառավարության նիստերի դահլիճում բացված ՀՅԴ ԳՄ երրորդ գերագույն ժողովում: Այս գերագույն ժողովը ՀՅԴ հայաստանյան կազմակերպության համար եւ խորհրդանշական է, եւ վճռորոշ: Այն առաջինն է կուսակցության պաշտոնական վերաբացումից հետո եւ այս ժողովին իրեն պատվիրակ կամ հրավիրյալ մասնակցում էին արդեն պետական բարձր պաշտոն ստացած ՀՅԴ անդամներ նախարարներ, մարզպետ, փոխմարզպետ...

Ժողովին ողջունելու էին եկել ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, եւ ՀՅԴ ներկայիս գործընկեր կուսակցությունները՝ ՀՌԱԿ, «Երկրապահ», ՍԻՄ, ՀԴԿ: Հրավիրյալի կարգավիճակով ներկա էին նաեւ նոր կազմավորվող Սոցիալիստական միության ներկայացուցիչներ Աշոտ Մանուչարյանի գլխավորությամբ, որոնք, ըստ ամենայնի, այդ ժողովին ակնկալում են ՀՅԴ-ի իբրեւ սոցիալիստական կուսակցության բացահայտումը: Թեեւ այսօր դեռ վաղ է ողնել, թե Դաշնակցության քաղաքական ուղեգծում ինչ գաղափարաբանություն կոդեգրվի տնտեսական ոլորտում ընկերվարությո՞ւն դասական իմաստով, թե՞ չափավոր ազատականություն: ՀՅԴ ուղեգծում միանշանակն է, որ հայտնի դարձավ, թե ներքաղաքական կրքերն Արցախում դեռեւս բորբոքված են եւ ՀՅԴ հայաստանյան կոմիտեից ակնկալվում է սկզբունքային դիրքորոշում, քաղաքական զեկույցը ներկայացնելու համար ԳՄ անդամ Վարդան Պետրոսյանը ձայն տվեց Վահան Հովհաննիսյանին, բայց քաղաքական զեկույց չեղավ: Վահան Հովհաննիսյանն իրեն բնորոշ ողղամտությամբ շեշտեց, թե հուսախաբ է անելու շատերին չասելով այն, ինչ բոլորն ակնկալում էին լսել բարձրաձայն: «Ես ինձ երբեք բույլ չեմ տա առաջարկել դեղատոմս»: Դեղատոմսը ՀՅԴ ներսում արդեն հասակ դարձած խմբավորումների եւ բեւեռային մոտեցումների միջեւ կատարվելիք ընտրությունն է: Միջանցքում, մեր հարցին, թե ինչն ինչպիսին է պատկերացնում ՀՅԴ քաղաքական, սոցիալ-տնտեսական մեկնակետերը, նա պատասխանեց. «Այլեւս գերագույն ժողովը սկսվել է, եւ ես ԳՄ անդամ չեմ. ուստի մենք կլսենք մեր ընկերներին, աշխատանքային նիստերը շատ երկար են լինելու եւ գերագույն ժողովից հետո արդեն կներկայացնենք մեր ուղեգիծը»: Ի տարբերություն նախորդ ժողովների կամ այլ կուսակցությունների ՀՅԴ այս ժողովում նախաողջ ոչ մի փաստաթուղթ չներկայացվեց բեւեռ համաձայնասխան հանձնախմբեր գրեթե երկու ամիս աշխատել են եւ ժողովի միայն տասը կարգը չորս-հինգ էջի վրա էր տպավորվել: Ժողովը փակվեց 1 ժամ 15 րոպե հետո, այսօրվանից ՀՅԴ պատվիրակները իրենց փակ նիստերը կշարունակեն ինչ-որ այլ դահլիճում, որի հասցեն դեռեւս չպարզաբանվեց, իսկ փակ նիստերի մասին տեղեկատվություն մեզ խոստացան ընձեռել ԳՄ դիվանից կամ «Երկիր» կուսակցական պաշտոնաթերթից:

ՀՅԴ-ն պատասխանատու է ոեւտության համար

Ամենասկզբում մեջբերեցինք Վահան Հովհաննիսյանի մատնանշած այն չորս խոցելի ուղղությունները, որ ՀՅԴ-ն առանձնացրել էր, բայց Վ. Հովհաննիսյանը մատնանշեց նաեւ այն ձեռքբերումները, որոնք կուսակցությանն առաջընթացի հույս են ներշնչում. ա) դանդաղ, բայց անշեղորեն մշակվող Սահմանադրության վերափոխումները, բ) քաղաքական խորհրդի ստեղծումը, որով «Հայաստանի իշխանությունը ժողովրդավարացման լուրջ քայլ է կատարում», գ) ներքաղաքական մթնոլորտի առողջացումը. «Ստեղծված է բոլոր նախաղայլներն իրար վրա նայելու ոչ թե բարիկադների վրայով, այլ քաղաքական կոմպրոմիսը դարձել հարաբերությունների հիմնական մեխանիզմ», դ) «Հայ դատի գաղափարը բանգարանային նմուշից, որ Լեւոն Տեր-Պետրոսյանն էր փորձում դարձնել, դարձել է ոեալ քաղաքականության մեջ գործոն... Մենք հանգիստ ենք Ղարաբաղի հարցում... որ ոչ թե անհայտ վեց հոգի են լուծում Ղարաբաղի ճակատագիրը, այլ ժողովուրդը»:

ՀՅԴ հայաստանյան կազմակերպության գերագույն ժողովը նախնական գնահատականներով կտեւի երկու շաբաթ: Հանդիսավոր մասի ավարտին զուգադիպեց տեխնիկական խափանումը ՀՀ օրհներգից հետո Դաշնակցության քայլերգն այդպես էլ չհնչեց. փոխարենը դաշնակցական մի պատվիրակ անձամբ երգեց, եւ ասի-ճանաբար նրան ձայնակցեցին «Դաշնակցության ճամփա բացենք» կրկներգով:

ՆԱԲԻՆԵ ԳԻԼԱՔԱՐՅԱՆ

Հաշմանդամներն ու տարեցներն ուշադրություն են պահանջում

Երեկ սոցաշ նախարարի առանձնասենյակում տեղի ունեցավ հաշմանդամների եւ տարեցների հիմնահարցերով զբաղվող հանրապետական հանձնաժողովի նիստը՝ նախարար Գագիկ Եգանյանի նախագահությամբ: Նիստին մասնակցում էին մշակույթի, կրթության փոխնախարարները, կույրերի, խուլ ու համրերի, հաշմանդամների, տարեցների եւ վետերանների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների, ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի ներկայացուցիչներ եւ ուրիշներ: Հաշմանդամների հայկական ընկերության նկատառումները եւ ակնկալիքները ՀՀ կառավարությունից ներկայացրեց ընկերության նախագահ Հարություն Շարբաթյանը, որը հաշմանդամների անունից վրդովմունք հայտնեց 1993 թ. ընդունված հաշմանդամների մասին օրենքում ավելի ուշ մտցված փոփոխությունների առնչությամբ, մասնավորապես չիմնավորված եւ հաշմանդամների շահերն ուղղակիորեն ոտնահարող գործողություն համարելով վերջիններիս համար նախատեսված արտոնությունների փոխարինումն այսպես կոչված տրանսֆերտներով, այսինքն՝ նպաստներով: Ամենահամեստ հաշվարկներով յուրաքանչյուր ամիս 8000 դրամ խնայող արտոնությունները (այդ թվում՝ տրանսպորտից անվճար օգտվելու իրավունքը) փոխարինվել են 3500 դրամ չնչին գումարով, որ վճարվում է մեծ ուշացումներով, ասաց նա: «Մեկ է, հաշմանդամները չեն վճարում, հայհոյելով իջնում են» (խոսքն ուղեվարձի մասին է), նկատեց որ Շարբաթյանը՝ ներկայացնելով հաշմանդամների պահանջը՝ վերականգնել հաշմանդամների արտոնությունները: Հանձնաժողովի՝ իշխանությունները ներկայացնող հաստվածը (ԱԺ պատգամավոր եւ մշակույթի փոխնախարար Սրամ Մանուկյան, սոցաշ նախարար Գագիկ Եգանյան) հիշ հավանական եւ աննպատակահարմար համարեց օրենքի «ի շրջանս յուր» վերադարձը: Տրանսֆերտային համակարգը, նրանց կարծիքով, արդարացված է, այլ բան է նպաստների չափի անընդունելիության խնդիրը: Ինչ վերաբերում է տրանսպորտից անվճար օգտվելու արտոնությանը, ապա, ըստ նախարարի, հարցը կարելի է ներկայացնել կառավարության ուշադրությանը:

Հաշմանդամների մյուս պահանջն աշխատանքային գործունեության ապահովումն է՝ նախ 50-60 տոկոսով հաշմանդամներից կազմված ուսումնարտադրական ձեռնարկությունների (եւ հաշմանդամ ձեռներեցների) հարկային բեռի գոնե կիսով չափ թեթեւացման, երկրորդ, հաշմանդամներին համեմատաբար խոշոր ձեռնարկություններում ներգրավելու միջոցով: Նախարարը պարզաբանեց, որ զբաղվածության օրենքի համաձայն, ավելի քան 200 աշխատող ունեցող ձեռնարկությունները պարտավոր են տեղերի 5 տոկոսը հաշմանդամներին տրամադրել, խնդիրն այն է, թե որքանով է պահպանվում օրենքի տառը (խոսքը վերջինս անտեսելու դեպքում տուգանքներ վճարելու մասին է):

Հանձնաժողովը որոշեց իրատես լինել եւ «շատ բան պահանջելու եւ ոչինչ չստանալու փոխարեն» ընտրել ոսկե միջինը. հաշմանդամների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին առաջարկվեց հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել կոնկրետ առաջարկություններ կոնկրետ բիզնես-ծրագրերով, որոնց ֆինանսավորման ուղիները կարող են քննարկվել կառավարության, հնարավոր է, նաեւ ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի գրասենյակի հետ համատեղ:

Օրակարգի հաջորդ հարցը վերաբերում էր տարեցների նկատմամբ պետական ուշադրության պակասին: «Տարեցների հարցերով ոչ ոք չի զբաղվում», բողոքեց վետերանների միության պատասխանատու քարտուղար Վասիլի Վարդանովը: Ըստ նրա, Հայաստանում կան 60-74 տարեկան 392 հազար 750 տարեցներ, 75-84 տարեկան 60 հազար 538 ծերեր եւ 85-ից բարձր տարիքի 20 հազար 386 երկարակյացներ, որոնց 73 տոկոսը դժգոհ է պետությունից, 43 տոկոսը՝ հասարակությունից, 11,5 տոկոսն՝ իրենց իսկ զավակներից: Տարեցների նկատմամբ անուշադրությունը փաստող այս վիճակագրությունից ելնելով, որն Վարսանովն առաջարկեց. Աժ-ում գոնե տեղեկատվական կարգով լսումներ անցկացնել տարեցների խնդիրների վերաբերյալ, մշակել տարեցներին օգնելու ազգային ծրագիր, նախագահի ուշադրությանը ներկայացնել տարեցների միջազգային տարին նշելու միջոցառումների ծրագիրը, մամուլին հանձնարարել «ինչ-որ ձեւով անդրադառնալ տարեցներին բացարձակ լռություն պահպանելու փոխարեն»: Այդ առաջարկություններից առավել ընդունելի համարվեց տարեցների միջազգային տարին նշելու առաջարկը, իսկ մամուլին հանձնարարական տալու վարկածը, բնականաբար, մերժվեց, քանզի, ինչպես ոչ առանց կասկի նկատեց Սրամ Մանուկյանը, «մամուլն ազատ է»:

ԼԵՎՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՏԱՐԵԼԻՑ

Դիվանագետի մահը գեներալի կորուստ է

Մեկ շաբաթ առաջ պատշաճական այցով Հայաստանում էր Ռումինիայի նախագահ Էմիլ Կոնստանտինեսկուն: Այդ օրն ակամա հիշեցի Ռումինիայում ՀՀ առաջին դեսպան Գեորգի Ղազինյանին: Այսօր հուլիսի 11-ին, դիվանագետի մահվան տարելիցն է: Անկախացման առաջին իսկ պահից մեր հանրապետությունը սխալված էր ներգրավվել մերթ հաջող, մերթ անհաջող ռազմադիվանագիտական պատերազմի մեջ եւ մեկով էր պայմանավորվում մյուսի հաջողությունը: Ուստիեւ դիվանագետի մահը զինվոր կորցնելու պես մի բան է: Լավ դիվանագետը հավասարազոր է իսկական (ոչ ակնթարթային) գեներալի: Այս առումով Գեորգի Ղազինյանը հետու չդնեմ է գնար. նա իսկական գեներալի որդի է:

1975-ին նա գերազանցության դիպլոմով ավարտեց Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտը միանգամից աշխատանքի անցնելով ԽՍՀՄ-ի արտա-



քին գործերի նախարարության կենտրոնական աparատում: Այնուհետեւ սկսվեց նրա դիվանագիտական առաքելությունը նախ Մոզամբիկում (ԽՍՀՄ դեսպանատան առաջին քարտուղար), եւ ապա Պորտուգալիայում (դեսպանի խորհրդական):

Հայաստանի անկախացման հետ Գեորգի Ղազինյանը ռուսաստանյան հետանկարային դիվանագետներից մեկը, որոշեց ծառայել «պատշաճական երեւանին» չափազանց մտոտոս հեռանկարներով:

1992-ի ապրիլին նա նշանակվեց ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ, իսկ 1994-ի ապրիլին ՀՀ դեսպան Ռումինիայում, եւ համատեղման կարգով, նաեւ Մոլդովայում: 1997 թ. հուլիսի 11-ին 44-ամյա դիվանագետը հանկարծամահ է լինում Բուխարեստի իր աշխատասենյակում:

Գեորգի Ղազինյանն այն եզակի դիվանագետներից էր, ովքեր երբեմն չեն խառնվում ներքաղաքական եւ ներիշխանական անցուդարձերին: Նա հեռու էր ինտրիգներից եւ ցուցադրվելու մղումից: Այս առումով նա օրինակ չծառայեց մեր շատ ու շատ «հայտնի» դիվանագետների համար: Ցանկություն չկա մեծարելու մենակ մյուսներին փնովելու եղանակով: Պարզապես նա իսկական դիվանագետ էր եւ գիտեր՝ ինչ է նշանակում դիվանագիտությունը: Ուստի եւ Գեորգի Ղազինյանը երբեմն չդարձավ «մեր տղերքից մեկը», ովքեր, հենց այդ պատկանելության սկզբունքով դեսպան են նշանակվում կամ էլ են կանչվում այս կամ այն երկրից: Նրան հնարավոր չէ այդպես մոտենալ, քանզի նման դեպքում «տակ-տիման մեջ» կվտանգեր «արհեստավարժության» վարկածը:

Գեորգի Ղազինյանը չէր կարող հանկարծակի հիվանդանալ կամ հանկարծակի ես կանչվել: Նա մահացավ իր դիվանագետի սեղանի առաջ, եւ սա ունի իր խորհուրդը: Հանկարծակի

ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Արաբական մամուլ

Ամբողջ արաբական աշխարհում ծանոթ անուն է Քուվեյթի տեղեկատվության նախարարության հրատարակություն «Ալ-Արաբի» («Արաբը») գրական, մշակութային, հասարակական ամսական հանդեսը: Այս գեղատիպ եւ գունավոր պարբերականը, որի ծավալը բոլոր դեպքերում գերազանցում է A-4 ֆորմատի 200 էջը, արաբական աշխարհում վաճառվում է 0.8-2 ամերիկյան դոլարի սահմաններում:

Հարյուր հազարավոր տիրաժակով լույս տեսնող համաարաբական հանդեսի այս տարվա ապրիլի համարի երեք նյութեր առնչվում են հայությանը:

Առաջինը՝ «Ամսվա նամակը», Սիրիայից դոկտոր Շաուկի Ապու Խալիլի նամակն է: Նամակագիրը դժգոհում է հանդեսի 1998 թ. հունվարի համարում լույս տեսած «Մուսուլմանները Կենտրոնական Ասիայում եւ Արեւելյան Եվրոպայում» խորագրում թույլ տրված անճշտություններից, որոնց շարքում՝ Նախիջեւանը: «Նախիջեւանի շրջանը Ադրբեջանի մի մասն է, որոնց հարից բաժանում է Հայաստանի մի լեզվակ՝ մինչեւ իրանական սահմանը, այն ադրբեջանական հող է», հայտարարում է ադրբեջանցիների ինքնակոչ դատապաշտպանը:

Երկրորդ նյութը Սիրիայից մի այլ դոկտորի՝ Մուհամադ Տահա ալ-Ջասերի հոդվածն է առերեւույթ իսլամությունն ընդունած հրեաների՝ այսպես կոչված «դեոնմեների» (հավատափոխների) մասին: Հեղինակը գրում է Օսմանյան կայսրությանը կործանման տարած այս երիտթուրքական հավատափոխների մասին, սակայն նա նույնիսկ հեռավոր ակնարկով չի հուշում Հայկական ցեղասպանության ծրագրման ու գործադրման մեջ նրանց էական դերակատարության մասին:

«Ալ-Արաբի» հանդեսի երրորդ նյութը Ադրբեջանի մասին մի ընդարձակ ռեպորտաժ է (էջ 45-61), որը ներծծված է հակահայկական թույնով: Լրագրողը՝ դոկտոր Մուհամադ ալ-Սունսի Գանդիլը, թղթին է հանձնել 1997 թ. դեկտեմբերին Ադրբեջան իր այցելության տպավորությունները՝ «Կրակներ Կասպից ծովի վրա» ընդհանուր վերնագրով: Ռեպորտաժը ուղեկցված է շուրջ 30 գունավոր լուսանկարներով, որոնք կատարել է լրագրողին ընկերակցած ֆոտոլրագրող Ֆահդ ալ-Քուհը: Առանձնապես հետաքրքրական է հանդեսի 50-րդ էջում լույս տեսած քարտեզը. այն պատկերում է ամբողջ Կովկասն ու Անդրկովկասը, եւ «փայլում է» իր անճշտություններով: Չեչնիան եւ Ինգուշիան նրանում դեռեւս միավորված են. մինչ առանձին սահմանազատված են հարավային Ռուսաստանում, Ադրբեջանում եւ Վրաստանում ինքնավար վարչական միավորները, նույն իսկ չկա Ղարաբաղի երբեմնի «ինքնավարությունից» ԼՂԻՍ-ի տեսքով, այսինքն վերջինս պարզապես «կուլ է գնացել» Ադրբեջանին. մյուս կողմից, կաճաչ գույնով Ադրբեջանից տարբեր գույնով ներկայացված է Նախիջեւանի հայկական գրավյալ տարածը:

Պատմական կեղծարարության մի իսկական գլուխգործոց է ռեպորտաժը, որը կրկնում, երբեմն նույնիսկ գերազանցում է թուրք-ադրբեջանական պատմաշինարարությանը, թեեւ լրագրողը հայտնում է, որ իր տեղեկությունների մեծագույն մասը վերցրել է Ասիայի մուսուլմանների հանձնախմբում աշխատող արաբ երիտասարդներից ու հատկապես Ազրաֆ Խուդորից, «որը մեզ նույնիսկ մի ակնարկ չլեց» (էջ 45):

Ռեպորտաժն սկսվում է Բաքվում տարածված հոռի երեւույթների՝ վերնախավի զեխ կյանքի, կաշառակերության եւ մաֆիաների նկարագրությամբ: Ապա նկարագրվում են Բաքվի փողոցները, մետրոն, պարիսպները եւ հին քաղաքը (էջ 47-49), ինչպես եւ Ադրբեջանի ակադեմիայի եւ ձեռագրերի ինստիտուտի ծանր վիճակը: Ապա հեղինակը անցնում է զուտ քաղաքական թեմաներին: 1990 թ. հունվարի 20-ին խորհրդային բանակի մուտքը տգիտորեն տեղափոխելով մեկ տարի առաջ, հոդվածագիրը այն որակում է «Բաքվի ջարդ», որի ընթացքում ռուսական բանակը ջարդեց խաղաղ ու խեղճ ադրբեջանցիներին. նշույլ իսկ չկա այդ օրերին Բաքվում ծավալված հայկական ջարդերի մասին (էջ 50): Մեկական էջ հատկացնելով ձկնկիթի ու երկրագործության հարցերին, խուվեյթցի հեղինակն անցնում է նավթի թեմային ու ճնշարկում Կասպից ծովի կարգավիճակի ու ադրբեջանական նավթի տեղափոխման տարբերակները (էջ 52-55): Հեղինակը համոզված է, որ ադրբեջանական նավթի շուրջ առճակատման «արդյունքը վստահաբար ոուսների օգտին չի լինելու, ինչպես եղել է միշտ» (էջ 53): Պարզվում է, որ «Ադրբեջանը այն հանրապետություններից մեկն է, որը հիմնական դեր ունեցավ երկրորդ աշխարհամարտում խորհրդային հաղթանակում՝ շնորհիվ ոչ միայն պատերազմում ադրբեջանցի զինվորների եւ զորավարների քանակի, այլեւ այն պատճառով, որ նա մատակարարեց խորհրդային Միության պատերազմական նավթի 75 տոկոսը» (էջ 54): Դոկտոր Գանդիլը հարց է տալիս. «Մի՞թե Ադրբեջանը Կենտրոնական Ասիայի Քուվեյթն է լինելու» եւ ինքն էլ պատասխանում՝ հավանական համարելով այդ հեռանկարը, թեեւ կասկածում է, որ նավթի եկամուտների մեծագույն մասը յուրացնելու է իշխող վերնախավը (էջ 56): Ըստ լրագրողի, Իսրայելը տիրել է Ադրբեջանի տեղեկատվության եւ կապի ուղիներին (էջ 56): Ապա նա գրում է Ադրբեջանում խուվեյթցիների ֆինանսավորած բարեգործական ծրագրերի մասին (որբանոցներ, դպրոցներ, ջրհորների բացում, եւն):

Մեզ համար հատուկ հետաքրքրություն է ներկայացնում ռեպորտաժի վերջին մասը (էջ 58-61), որը ենթավերնագրված է «Թիթեղ եւ վրաններ»: Դոկտոր Գանդիլը նկարագրում է ադրբեջանցի փախստականների վիճակը եւ ճնշարկում արցախյան առճակատումը: Բարդայի գաղթականների մասին իր նկարագրության մեջ նա գրում է անգործ նստած տղամարդկանց մասին, որոնցից մեկը բղավում է. «Ի՞նչ են անելու նավթի փողերը. զե՞նք են գնելու մեր հողերը ազատագրելու համար, թե՞ շարունակելու են իրենց ցոփ կյանքը Բաքվում եւ մեզ անօթեւան են թողնելու» (էջ 59): Ըստ Գանդիլի, Արցախը «իր ամբողջ գոյության ընթացքում ինքնավար նահանգ է եղել Ադրբեջանի կազմում» (էջ 59): Գիտությունների դոկտոր տգետ լրագրողը երկու տարբեր տեղերում (էջ 59, 60) Գյուլիստանի դաշնագրի թվական է նշում 1913 թ. փոխանակ 1813 թ-ի: Նրա համաձայն, այդ թվականին միայն 12 հազար հայ ընտանիք էր ապրում «բնիկ մուսուլմանական շրջան» Ղարաբաղում, սակայն «Ռուսաստանը դյուրացրեց Թուրքիայից ու Իրանից շատ հայերի գաղթը» Ղարաբաղ, մյուս կողմից բռնագաղթի մղելով ադրբեջանցիներին. «Հարցը իր գագաթնակետին հասավ Ստալինի ժամանակ, երբ նա մեծ թվով ադրբեջանցիների Սիբիրի ցուրտ տափաստանները աքսորեց ու նրանց տեղը այլ ազգեր տեղավորեց» (էջ 60): Տուրք տալով Ադրբեջանի բաժանվածության մասին ադրբեջանցի պատմաշինարարների կեղծարարությանը, խուվեյթցի լրագրողը հայտարարում է, որ «Գյուլիստանի դաշնագրով Ադրբեջանը բաժանվեց Ռուսաստանի ու Իրանի միջեւ», որի հետեւանքով «շուրջ 9 միլիոն ադրբեջանցի մնաց իրանական իշխանության տակ մինչեւ այսօր» (էջ 60): Նույն հերյուրանքը էջեր առաջ եւս հիշված էր, երբ Թավրիզը հայտարարվում է Ադրբեջանի «իսկական մայրաքաղաքը», իսկ պարսիկ բանաստեղծ Նիզամին՝ «Ադրբեջանի մեծ բանաստեղծը» (էջ 48): Մինչեւ 1918 թ. անգամ Ադրբեջանի պատմությունը դարերի խորքն է հասցվում, Հայաստանի պատմությունը գրչի մի հարվածով չեղյալ է հռչակվում: Գիտությունների դոկտոր տգետ լրագրողը սեւով սպիտակի վրա գրում է. «Առավել զարմանալին այն է, որ Հայաստանի պետությունը... որեւէ ձեւի քաղաքական գոյություն չէ ունեցած եւ կազմավորվել է միայն Խորհրդային Միության հրահանգով» (էջ 61): Հայաղեստինյան գաղթականներին, մի քանի տող հետո ավելացնելով, որ Պաղեստինի նման Ադրբեջանը եւս զոհ գնաց «միջազգային դավադրությանը» (էջ 59), իսկ հոդվածի ավարտին նա «պատահականորեն» հայտնաբերում է, որ «թե՛ Հայաստանը եւ թե՛ Իսրայելը 3 միլիոն բնակչություն ունեն, բայց հաղթում են» (էջ 61):

Ադրբեջանցիների դատապարտյան լրագրողը խաղում է նաեւ կրոնական զգացմունքների հետ: Ըստ Գանդիլի, հայ եկեղեցին որդեգրել է հայոց «Ղարաբաղը մե՛րն է» նշանաբանը, որից հետո հայերը սկսեցին զինյալ խմբավորումներ ստեղծել սփյուռքում, ներառյալ արաբական մի քանի երկրներում». հետեւաբար, երբ ԽՍՀՄ-ը կործանվեց, «Ադրբեջանը կորած վիճակում էր, իսկ Հայաստանը՝ պատրաստ էր»: Ապա հայերը ամբաստանվում են բանակցությունները մերժելու մեջ: Եթե հավատալու լինենք խուվեյթցի այս հույժ անարժանահավատ լրագրողին, մի ադրբեջանցի պատասխանատու, որը ցանկացել է անհայտ մնալ, լրագրողին խոստովանել է, թե ամերիկյան ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ

Քուվեյթյան հանդեսը խեղաթյուրում է տարրական ճշմարտությունները



է, որոնց իրարից բաժանում է Հայաստանի մի լեզվակ՝ մինչեւ իրանական սահմանը. այն ադրբեջանական հող է», հայտարարում է ադրբեջանցիների ինքնակոչ դատապաշտպանը:

Երկրորդ նյութը Սիրիայից մի այլ դոկտորի՝ Մուհամադ Տահա ալ-Ջասերի հոդվածն է առերեւույթ իսլամությունն ընդունած հրեաների՝ այսպես կոչված «դեոնմեների» (հավատափոխների) մասին: Հեղինակը գրում է Օսմանյան կայսրությանը կործանման տարած այս երիտթուրքական հավատափոխների մասին, սակայն նա նույնիսկ հեռավոր ակնարկով չի հուշում Հայկական ցեղասպանության ծրագրման ու գործադրման մեջ նրանց էական դերակատարության մասին:

«Ալ-Արաբի» հանդեսի երրորդ նյութը Ադրբեջանի մասին մի ընդարձակ ռեպորտաժ է (էջ 45-61), որը ներծծված է հակահայկական թույնով: Լրագրողը՝ դոկտոր Մուհամադ ալ-Սունսի Գանդիլը, թղթին է հանձնել 1997 թ. դեկտեմբերին Ադրբեջան իր այցելության տպավորությունները՝ «Կրակներ Կասպից ծովի վրա» ընդհանուր վերնագրով: Ռեպորտաժը ուղեկցված է շուրջ 30 գունավոր լուսանկարներով, որոնք կատարել է լրագրողին ընկերակցած ֆոտոլրագրող Ֆահդ ալ-Քուհը: Առանձնապես հետաքրքրական է հանդեսի 50-րդ էջում լույս տեսած քարտեզը. այն պատկերում է ամբողջ Կովկասն ու Անդրկովկասը, եւ «փայլում է» իր անճշտություններով: Չեչնիան եւ Ինգուշիան նրանում դեռեւս միավորված են. մինչ առանձին սահմանազատված են հարավային Ռուսաստանում, Ադրբեջանում եւ Վրաստանում ինքնավար վարչական միավորները, նույն իսկ չկա Ղարաբաղի երբեմնի «ինքնավարությունից» ԼՂԻՍ-ի տեսքով, այսինքն վերջինս պարզապես «կուլ է գնացել» Ադրբեջանին. մյուս կողմից, կաճաչ գույնով Ադրբեջանից տարբեր գույնով ներկայացված է Նախիջեւանի հայկական գրավյալ տարածը:

Պատմական կեղծարարության մի իսկական գլուխգործոց է ռեպորտաժը, որը կրկնում, երբեմն նույնիսկ գերազանցում է թուրք-ադրբեջանական պատմաշինարարությանը, թեեւ լրագրողը հայտնում է, որ իր տեղեկությունների մեծագույն մասը վերցրել է Ասիայի մուսուլմանների հանձնախմբում աշխատող արաբ երիտասարդներից ու հատկապես Ազրաֆ Խուդորից, «որը մեզ նույնիսկ մի ակնարկ չլեց» (էջ 45):

Ռեպորտաժն սկսվում է Բաքվում տարածված հոռի երեւույթների՝ վերնախավի զեխ կյանքի, կաշառակերության եւ մաֆիաների նկարագրությամբ: Ապա նկարագրվում են Բաքվի փողոցները, մետրոն, պարիսպները եւ հին քաղաքը (էջ 47-49), ինչպես եւ Ադրբեջանի ակադեմիայի եւ ձեռագրերի ինստիտուտի ծանր վիճակը: Ապա հեղինակը անցնում է զուտ քաղաքական թեմաներին: 1990 թ. հունվարի 20-ին խորհրդային բանակի մուտքը տգիտորեն տեղափոխելով մեկ տարի առաջ, հոդվածագիրը այն որակում է «Բաքվի ջարդ», որի ընթացքում ռուսական բանակը ջարդեց խաղաղ ու խեղճ ադրբեջանցիներին. նշույլ իսկ չկա այդ օրերին Բաքվում ծավալված հայկական ջարդերի մասին (էջ 50): Մեկական էջ հատկացնելով ձկնկիթի ու երկրագործության հարցերին, խուվեյթցի հեղինակն անցնում է նավթի թեմային ու ճնշարկում Կասպից ծովի կարգավիճակի ու ադրբեջանական նավթի տեղափոխման տարբերակները (էջ 52-55): Հեղինակը համոզված է, որ ադրբեջանական նավթի շուրջ առճակատման «արդյունքը վստահաբար ոուսների օգտին չի լինելու, ինչպես եղել է միշտ» (էջ 53): Պարզվում է, որ «Ադրբեջանը այն հանրապետություններից մեկն է, որը հիմնական դեր ունեցավ երկրորդ աշխարհամարտում խորհրդային հաղթանակում՝ շնորհիվ ոչ միայն պատերազմում ադրբեջանցի զինվորների եւ զորավարների քանակի, այլեւ այն պատճառով, որ նա մատակարարեց խորհրդային Միության պատերազմական նավթի 75 տոկոսը» (էջ 54): Դոկտոր Գանդիլը հարց է տալիս. «Մի՞թե Ադրբեջանը Կենտրոնական Ասիայի Քուվեյթն է լինելու» եւ ինքն էլ պատասխանում՝ հավանական համարելով այդ հեռանկարը, թեեւ կասկածում է, որ նավթի եկամուտների մեծագույն մասը յուրացնելու է իշխող վերնախավը (էջ 56): Ըստ լրագրողի, Իսրայելը տիրել է Ադրբեջանի տեղեկատվության եւ կապի ուղիներին (էջ 56): Ապա նա գրում է Ադրբեջանում խուվեյթցիների ֆինանսավորած բարեգործական ծրագրերի մասին (որբանոցներ, դպրոցներ, ջրհորների բացում, եւն):

Մեզ համար հատուկ հետաքրքրություն է ներկայացնում ռեպորտաժի վերջին մասը (էջ 58-61), որը ենթավերնագրված է «Թիթեղ եւ վրաններ»: Դոկտոր Գանդիլը նկարագրում է ադրբեջանցի փախստականների վիճակը եւ ճնշարկում արցախյան առճակատումը: Բարդայի գաղթականների մասին իր նկարագրության մեջ նա գրում է անգործ նստած տղամարդկանց մասին, որոնցից մեկը բղավում է. «Ի՞նչ են անելու նավթի փողերը. զե՞նք են գնելու մեր հողերը ազատագրելու համար, թե՞ շարունակելու են իրենց ցոփ կյանքը Բաքվում եւ մեզ անօթեւան են թողնելու» (էջ 59): Ըստ Գանդիլի, Արցախը «իր ամբողջ գոյության ընթացքում ինքնավար նահանգ է եղել Ադրբեջանի կազմում» (էջ 59): Գիտությունների դոկտոր տգետ լրագրողը երկու տարբեր տեղերում (էջ 59, 60) Գյուլիստանի դաշնագրի թվական է նշում 1913 թ. փոխանակ 1813 թ-ի: Նրա համաձայն, այդ թվականին միայն 12 հազար հայ ընտանիք էր ապրում «բնիկ մուսուլմանական շրջան» Ղարաբաղում, սակայն «Ռուսաստանը դյուրացրեց Թուրքիայից ու Իրանից շատ հայերի գաղթը» Ղարաբաղ, մյուս կողմից բռնագաղթի մղելով ադրբեջանցիներին. «Հարցը իր գագաթնակետին հասավ Ստալինի ժամանակ, երբ նա մեծ թվով ադրբեջանցիների Սիբիրի ցուրտ տափաստանները աքսորեց ու նրանց տեղը այլ ազգեր տեղավորեց» (էջ 60): Տուրք տալով Ադրբեջանի բաժանվածության մասին ադրբեջանցի պատմաշինարարների կեղծարարությանը, խուվեյթցի լրագրողը հայտարարում է, որ «Գյուլիստանի դաշնագրով Ադրբեջանը բաժանվեց Ռուսաստանի ու Իրանի միջեւ», որի հետեւանքով «շուրջ 9 միլիոն ադրբեջանցի մնաց իրանական իշխանության տակ մինչեւ այսօր» (էջ 60): Նույն հերյուրանքը էջեր առաջ եւս հիշված էր, երբ Թավրիզը հայտարարվում է Ադրբեջանի «իսկական մայրաքաղաքը», իսկ պարսիկ բանաստեղծ Նիզամին՝ «Ադրբեջանի մեծ բանաստեղծը» (էջ 48): Մինչեւ 1918 թ. անգամ Ադրբեջանի պատմությունը դարերի խորքն է հասցվում, Հայաստանի պատմությունը գրչի մի հարվածով չեղյալ է հռչակվում: Գիտությունների դոկտոր տգետ լրագրողը սեւով սպիտակի վրա գրում է. «Առավել զարմանալին այն է, որ Հայաստանի պետությունը... որեւէ ձեւի քաղաքական գոյություն չէ ունեցած եւ կազմավորվել է միայն Խորհրդային Միության հրահանգով» (էջ 61): Հայաղեստինյան գաղթականներին, մի քանի տող հետո ավելացնելով, որ Պաղեստինի նման Ադրբեջանը եւս զոհ գնաց «միջազգային դավադրությանը» (էջ 59), իսկ հոդվածի ավարտին նա «պատահականորեն» հայտնաբերում է, որ «թե՛ Հայաստանը եւ թե՛ Իսրայելը 3 միլիոն բնակչություն ունեն, բայց հաղթում են» (էջ 61):

Ադրբեջանցիների դատապարտյան լրագրողը խաղում է նաեւ կրոնական զգացմունքների հետ: Ըստ Գանդիլի, հայ եկեղեցին որդեգրել է հայոց «Ղարաբաղը մե՛րն է» նշանաբանը, որից հետո հայերը սկսեցին զինյալ խմբավորումներ ստեղծել սփյուռքում, ներառյալ արաբական մի քանի երկրներում». հետեւաբար, երբ ԽՍՀՄ-ը կործանվեց, «Ադրբեջանը կորած վիճակում էր, իսկ Հայաստանը՝ պատրաստ էր»: Ապա հայերը ամբաստանվում են բանակցությունները մերժելու մեջ: Եթե հավատալու լինենք խուվեյթցի այս հույժ անարժանահավատ լրագրողին, մի ադրբեջանցի պատասխանատու, որը ցանկացել է անհայտ մնալ, լրագրողին խոստովանել է, թե ամերիկյան ընկերությունները համաձայնություններ են կնքել Ադրբեջանի հետ՝ Ղարաբաղի ոսկու հանքերը շահագործելու համար, հետեւաբար, ըստ ադրբեջանցի պատասխանատուի, ամերիկացիք «շահագրգռված են այս հարցի լուծումով»: Նման դեպքերի համար է ասված. «Հավը երազում կորեկ է տեսնում»...

Մուհամմադ ալ-Սունսի Գանդիլի «Կրակներ Կասպից ծովի վրա» ընդարձակ ռեպորտաժը «փայլում է» պատմա-աշխարհագրական այլ անճշտություններով եւս. այսպես, նա Ադրբեջանը տեղադրում է Կենտրոնական Ասիայում (էջ 54), իսկ Շամիլին՝ հայտարարում է ռուսների դեմ պատերազմի ընթացքում նահատակված (էջ 47. Շամիլը մահացել է աքսորավայրում), եւ այլն: Մի խոսքով, գիտությունների դոկտորը իր նյութը շարադրել է զոռ տալով իր երեւակայությանը՝ ցանկությունը որպես իրականություն ներկայացնելով:

Այսուհանդերձ, պրն Գանդիլը չի կարողացել մի քանի խոսք էլ չասել Ադրբեջանում հոռի երեւույթների՝ վերնախավի փտածության, թմրաբիզնեսի, մաֆիաների, կաշառակերության եւ ադրբեջանցիների նկատելի ծուլության մասին:

«Ալ-Արաբի» հանդեսում լույս տեսած հակահայկական այս ռեպորտաժը աղացուցում է, որ ՀՅԴ-ի հակակշռի տակ գտնվող Քուվեյթի Ազգային առաջնորդարանն ու ազգային իշխանությունները ոչինչ չեն արել երկրում հայկական տեսակետը ներկայացնելու գործում: Սպասում ենք, որ Հայաստանի պետական ու գիտական շրջանակները արժանի հակահարված կտան հակահայկական այս խառնակչությանը:

ԳԵՎՈՐԳ ՅՈՍԵՖՅԱՆ,
Քեռադ-Երեւան

ՍԻՐԻԱ

Հայությանը առնչված արաբերեն նոր տպագրություններ 1997 թ.-ին

Հալեպում, Հայկական բարեգործական ընդհանուր միության հրատարակությամբ լույս են տեսել երկու արժեքավոր թարգմանություններ, որոնք կատարել է գաղթօջախում ծանոթ թարգմանիչ բժիշկ Ալեքսանդր Քեշիշյանը: Երկուսն էլ կրում են 1997 թ. նշումը:

Առաջինը պրոֆեսոր Վահագն Տատրյանի «Գերմանական եւ ավստրիական փաստաթղթերը Մեծ եղեռնի մասին» աշխատության թարգմանությունն է 94 էջ ծավալով:

Երկրորդ հրատարակությունն է «Արաբական դրամների հատումը Հայաստանում եւ դրանց շրջանառությունը արաբական կայսրության ներսում եւ դրսում» դրամագիտական հատորը 151 էջ ծավալով: Հատորում ներկայացված են 8-10-րդ դարերում Հայաստանի տարբեր վայրերում հատված արաբական դրամների վերաբերյալ հայ դրամագետներ Արշաքես Մուշեղյանի, Ճորճ Սաղոպաղյանի եւ Արամ Տեր-Ղեւոնդյանի ուսումնասիրությունները:

Անցյալ տարվա թվականով նույն խաղաքի «Մարդին» հրատարակչությունը լույս է ընծայել Հայաստանի Հանրապետության նախկին նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր Լեւոն Տեր-Պետրոսյանի «Հայ-ասորական մշակութային հարաբերությունները» աշխատության արաբերեն թարգմանությունը 253 էջ ծավալով: Հայերենից արաբերեն է թարգմանել Լիբանանում ՀՀ դեսպանության առաջին քարտուղար, արաբագետ Պողոս Սարաջյանը:

Բեյրութում 1997 թվականի նշումով հրատարակվել է անգլիացի նշանավոր պատմաբան Սոնոլդ Թոյնբիի «Հայկական ջարդերը կամ մի ազգի բնաջնջումը» աշխատությունը 115 էջ ծավալով, Ժոզեֆ Գալուստյանի թարգմանությամբ: Հեղինակը գրել է Մեծ եղեռնի տարիներին Ֆորեյն օֆիսի (Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարություն) հանձնարարությամբ:

Անցյալ տարվա նշումով, Բեյրութի «Մարդ» հրատարակչությունը լույս է ընծայել հայ կաթողիկե եպիսկոպոս Վարդան Աշգարյանի «Ողկույզների խրախճանքը» հայերեն տաղարանի արաբերեն թարգմանությունը՝ 133 էջ ծավալով, Ժուլի Մարդի թարգմանությամբ:

Այս տարեսկզբին, Կահիրեի «Արեւ» հայերեն օրաթերթը թողարկել է իր համանուն արաբերեն հավելվածի առաջին համարը: Արաբերեն հավելվածի խմբագիրն է երիտասարդ պատմաբան, հայոց մասին գրքի հեղինակ Մուհամադ Ռիֆաթ ալ-Իմամը:

Նույն խաղաքում լույս է տեսել «Դարերի ընթացքում հայկական բանաստեղծության ծաղկաքաղ» արաբերեն հատընտիրը: Պատրաստել ու բանաստեղծությունները հայերենից արաբերեն են թարգմանել եգիպտահայ գրականագետ Վարուժան Գազանճյանը եւ եգիպտացի բանաստեղծ ու թարգմանիչ Մուհամեդ Իբրահիմ Աբու-Սինան: Գրքում նմուշներ են ներկայացվում հայ 24 բանաստեղծների ստեղծագործություններից:

Վերոհիշյալ արաբերեն հրատարակությունները վկայում են, որ հայկական միությունները գիտակցել են հայությանը, Մեծ եղեռնը եւ հայ-արաբական պատմական առնչությունները Մերձավոր Արեւելքի արաբներին ծանոթացնելու կենսական կարեւորությունը:

ԳԵՎՈՐԳ ՅՈՍԵՖՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

Ռուս ուղղափառ եկեղեցին եւ նրա առաջնորդը Մոսկվայի եւ համայն Ռուսիոյ պատրիարք Ալեքսիյ Երկրորդը երկակի դրության մեջ են: Անցյալում իրենց պարտավորված էին համարում պահպանել Նիկոլայ Երկրորդի, նրա կնոջ, 3 աղջիկների եւ ծառայողների ոսկորները, իսկ հիմա, երբ Ռուսաստանի կառավարությունը վերջ ի վերջո որոշել է հուլիսի 17-ին աճյուններին հանգիստ տալ Սանկտ Պետերբուրգում, եկեղեցին բոյկոտում է արարողությունը: Նույնիսկ տեղական քահանան կարող է թույլտվություն չտանալ թաղման ժամանակ աղոթելու: «Լավ կլինի ընդհանրապես այդ թաղումից հեռու մնանք: Եկեղեցին չպետք է մտնի քաղաքականություն», հայտարարել է սուրբ սինոդի անդամ Գեորգի Միսրոֆանովը:

հեծազոտեցին ոսկորները, ասամները ու մազերը եւ հայտարարեցին, որ դրանք պատկանում են Ռոմանովներին: ԴՆԹ-ի լրացուցիչ քննությունը հաստատեց արդյունքները:

Ռուսաստանի կառավարական հանձնաժողովը հավակվեց 1995 թ. հոկտեմբերին եւ որոշեց ոսկորները թաղել 1996 թ. փետրվարի 25-ին: Ըստ ուղղափառ եկեղեցական օրացույցի, այդ օրը հավվում են բոլոր մեղքերը: Այդպիսով կառավարությունը նպատակ ուներ ներողություն խնդրել ոչ միայն այս ընտանիքի, այլ նաեւ սովետական դարաշրջանում սպանված միլիոնավոր մարդկանց համար, ովքեր այդպես էլ չգտան իրենց շիրիմները: Սպասումները մեծ էին, արարողությունը պետք է անցկացվեր մեծ շուքով, Սանկտ Պետերբուրգի սուրբ Իսահակ մայր տաճարում, պատրիարքի ղեկավարությամբ, նախագահ Ելցինի, ռուս եւ օտարազգի դիվանագետների, հյուրերի, կենդանի Ռոմանովների, նույնիսկ էլիզաբեթ երկրորդ թագուհու ներկայությամբ, երգելու էր 1000 մարդուց բաղկացած երգչախումբը:

Բայց երբ եկավ քվեարկելու ժամանակը, ռուս ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչ մետրոպոլիտ Յուվենալին ասաց «ՈՉ»: Նա պահանջեց լրացուցիչ քննություն, վերջին կասկածներըցրելու համար: Այդ օրից անցել է երկուսուկես տարի, իսկ եկեղեցու սպասավորները դեռ կասկածում են: Ըստ սուրբ հայրերի, շատ կարեւոր է պարզել, արդյո՞ք այդ սպանությունը «ծիսական բնույթ ունի»: Չէ՞ որ հրեաների ծեռքի գործն է ի վերջո, իսկ հրեաները, որպես ասիական ցեղերի հետնորդներ, սովորություն ունեն թոցնելու իրենց թշնամիների գլուխները:

Ըստ լեգենդների, կոմունիստներից մի քանիսը, որոնք հրեա են եղել, կտրել են Ռոմանովների գլուխները եւ ուղարկել Կրեմլ, որտեղ Լենինը հաճույք էր ստանում դրանց նայելով: Այսպիսով, սիբիրյան անտառում գտնված դիակների վրա անհրաժեշտ է գտնել գլխատման հետքեր, իսկ քանի որ դրանք չեն հայտնաբերվել, ուրեմն կառավարությունը որոշել է թաղել ոչ այն դիակները:

Սակայն կառավարության համբերությունը եւս անհատնում չէ: եւ տարվա սկզբին Բորիս Նեմցովը հայտարարեց, որ կառավարությունը ճանաչում է ոսկորների պատկանելությունը: եւ հուլիսի 17-ին, սպանությունից ուղիղ 80 տարի անց, դրանք կթաղվեն Սանկտ Պետերբուրգում: Եկեղեցին էլ իր հերթին հայտարարեց, որ ոչ պատրիարքը, ոչ էլ որեւէ գլխավոր եկեղեցական արարողությանը չի մասնակցի:

12 եպիսկոպոսներից բաղկացած սուրբ սինոդը պատրիարքի գլխավորությամբ, կիավակվի եւս մեկ անգամ, բայց հավանաբար չի փոխի իր կարծիքը: Պատրիարքը հայտարարել է, որ «պիտի սպասենք, մինչեւ մյուս սերունդը մեծանա ու լուծի այս խնդիրը»:

Ուղղափառ եկեղեցին կարծես թե վերհիշել է գիտության հետ ունեցած վաղեմի տարաձայնությունները:

Թարգմանեց Ռ. ԱԶԻԶՅԱՆԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Արքայական ընտանիքը՝ անհանգրվան

Ռուսաստանի վերջին ցար Նիկոլայի եւ արքայական ընտանիքի ճակատագրի մասին վերջերս շատ է գրվել: Այնուամենայնիվ «Նյուզուիքում» տպագրված այս նյութի հեղինակ Ռոբերթ Մասսին, որի գրչին են պատկանում «Նիկոլայ եւ Ալեքսանդրա», «Ռոմանովներ. վերջին գլուխը» եւ Պուլիցերյան մրցանակի արժանացած «Պետրոս Մեծ» գրքերը, փորձում է եւս մեկ անգամ պատասխանել ո՞վ եւ ինչպե՞ս է սպանել Ռոմանով ընտանիքի անդամներին, եւ ինչո՞ւ է ռուս ուղղափառ եկեղեցին հրաժարվում ազնվազարմ ոսկորները պատշաճ կերպով թաղելուց:

Չնայած գիտնականները այլեւս կասկած չունեն, որ ոսկորները պատկանում են Ռոմանովներին, ուղղափառ եկեղեցին կուրորեն շարունակում է չընդունել իսկությունը: Եկեղեցին մերժում է ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ Բրիտանիայի գիտնականների եւ ԴՆԹ մասնագետների եզրակացությունը, քանի որ դրանց նրան ճնշում են ռուս ծայրահեղականները: Նրանց կարծիքով ոսկորների հետ կապված այս ողջ թոհուբոհը սիբիրյան անտառում հայտնաբերումից մինչեւ միջազգային հեղինակավոր մասնագետների քննությունն ու ճանաչումը, պատվիրել է սովետական ՊԱԿ-ը:

Լաբորատորիաներն ասում էին Ռուսաստանի ներկայիս կառավարությանը, իսկ եթե այդ ասելի կառավարությունը ճանաչել է ոսկորների իսկությունը եւ որոշել է թաղել դրանք արքայական ընտանիքին վայել շուքով, ուրեմն ոսկորները կեղծ են, այսպիսին է ծայրահեղականների տրամաբանությունը:

1918 թ. ամառային մի գիշեր կոմունիստների մի խումբ Նիկոլայ ցարին եւ իր ընտանիքին (11 մարդ) գնդակահարել է եկատերինբուրգյան տան ձեղնահարկում: Դիակներն այնուհետեւ անհետացան: 1991 թ.-ին նոր նախագահ ընտրված Բորիս Ելցինը թույլատրեց բացել գերեզմանը, որտեղ ենթադրվում էր գտնել արքայական ընտանիքի աճյունները: Գտնվեցին 9 մարդու ոսկորներ: պակասում էին մեկ արքայադուստրը եւ արքայազն Ալեքսեյը: Ճանաչված գիտնականները կավարությամբ, նախագահ Ելցինի, ռուս եւ օտարազգի դիվանագետների, հյուրերի, կենդանի Ռոմանովների, նույնիսկ էլիզաբեթ երկրորդ թագուհու ներկայությամբ, երգելու էր 1000 մարդուց բաղկացած երգչախումբը:

Բայց երբ եկավ քվեարկելու ժամանակը, ռուս ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչ մետրոպոլիտ Յուվենալին ասաց «ՈՉ»: Նա պահանջեց լրացուցիչ քննություն, վերջին կասկածները ցրելու համար: Այդ օրից անցել է երկուսուկես տարի, իսկ եկեղեցու սպասավորները դեռ կասկածում են: Ըստ սուրբ հայրերի, շատ կարեւոր է պարզել, արդյո՞ք այդ սպանությունը «ծիսական բնույթ ունի»: Չէ՞ որ հրեաների ծեռքի գործն է ի վերջո, իսկ հրեաները, որպես ասիական ցեղերի հետնորդներ, սովորություն ունեն թոցնելու իրենց թշնամիների գլուխները:

Ըստ լեգենդների, կոմունիստներից մի քանիսը, որոնք հրեա են եղել, կտրել են Ռոմանովների գլուխները եւ ուղարկել Կրեմլ, որտեղ Լենինը հաճույք էր ստանում դրանց նայելով: Այսպիսով, սիբիրյան անտառում գտնված դիակների վրա անհրաժեշտ է գտնել գլխատման հետքեր, իսկ քանի որ դրանք չեն հայտնաբերվել, ուրեմն կառավարությունը որոշել է թաղել ոչ այն դիակները:

Սակայն կառավարության համբերությունը եւս անհատնում չէ: եւ տարվա սկզբին Բորիս Նեմցովը հայտարարեց, որ կառավարությունը ճանաչում է ոսկորների պատկանելությունը: եւ հուլիսի 17-ին, սպանությունից ուղիղ 80 տարի անց, դրանք կթաղվեն Սանկտ Պետերբուրգում: Եկեղեցին էլ իր հերթին հայտարարեց, որ ոչ պատրիարքը, ոչ էլ որեւէ գլխավոր եկեղեցական արարողությանը չի մասնակցի:

12 եպիսկոպոսներից բաղկացած սուրբ սինոդը պատրիարքի գլխավորությամբ, կիավակվի եւս մեկ անգամ, բայց հավանաբար չի փոխի իր կարծիքը: Պատրիարքը հայտարարել է, որ «պիտի սպասենք, մինչեւ մյուս սերունդը մեծանա ու լուծի այս խնդիրը»:

Ուղղափառ եկեղեցին կարծես թե վերհիշել է գիտության հետ ունեցած վաղեմի տարաձայնությունները:

Թարգմանեց Ռ. ԱԶԻԶՅԱՆԸ

ԲԱԼԿԱՆՆԵՐ

Քլինթոնի վարչակազմը դիմում է «մաֆոյին» դիվանագիտության

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 10 ՀՈՒԼԻՍ. ՍՐՍԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Քլինթոնի վարչակազմը ակտիվորեն է օգտագործում «մաֆոյին» դիվանագիտությունը, փորձելով փոխզիջման հասնել Բելգրադի եւ Կոսովոյի ալբանացիների միջեւ: Ինչպես հինգշաբթի օրը հաղորդել է ԱՄՆ-ի բարձրաստիճան պատասխանատու ներկայացուցիչը, խնդրելով չհրապարակել իր անունը, այդ առաքելությունը դրված է Մակեդոնիայում ամերիկյան դեսպան Քրիստոֆեր Հիլի վրա, իսկ նրա մանդատը հավանության է արժանացել նախկին Հարավսլավիային առնչվող շփման խմբի անդամների՝ Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Իտալիայի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի կողմից:

Աստիճանաբար որպես լրատվական գործակալության հաղորդման համածայն, Հիլը իր հետ Բելգրադ եւ Պրիշտինա չի տանելու կարգավորման «վերջնական ծրագիրը», այլ գինված է լինելու միայն «սկզբունքներով, որոնցով առաջնորդվելու են ԱՄՆ-ի միջնորդությամբ կայանալիք բանակցությունների մասնակիցները»: Ինչպես հինգշաբթի օրը հաղորդել է պետդեպարտամենտի պատասխանատու ներկայացուցիչ Ջեյմս Ռուբինը, շփման խումբը այդ սկզբունքների շուրջ համաձայնության է հասել Բոննում կայացած իր վերջին նիստում եւ դրանք են մեկնակետ դառնալու Հիլի ձեռնարկելիք բանակցությունների համար:

ՏԱՄԱՌՈՏ

Սերգեյ Կիրիենկո. «Ռուսաստանում փաստորեն ֆինանսական շուկա չկա»

ՄՈՍԿՎԱ, 10 ՀՈՒԼԻՍ, ՍՐՍԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: «Ռուսաստանում ներկայումս ֆինանսական շուկա չկա», այսօր Դաշնության խորհրդում հայտարարեց Ռուսաստանի վարչապետ Սերգեյ Կիրիենկոն: Վերլուծելով վերջին երկու շաբաթվա ընթացքում երկրի տնտեսության մեջ տեղի ունեցած փոփոխությունները, նա նշեց, որ ֆինանսատնտեսական իրավիճակը «խստացել է», պետական գանձարանի պարտատոմսերի եկամտաբերությունը տատանվում է տարեկան 80-100 տոկոսի սահմաններում: Նա ընդգծեց, որ մինչեւ այժմ չի ընդունված կառավարության կայունացնող ծրագրի կատարումն ապահովող օրինագծերի փաթեթը, որը ներկայացրել է վերջինս: «Հասարակության մեջ ուժեղանում է սոցիալական լարվածությունը, ինչը, բնականաբար, չի նպաստում կայունացմանը», հայտարարեց Սերգեյ Կիրիենկոն:

Վրաստանին գազ՝ արտոնյալ պայմաններով

ԹԲԻԼԻՍԻ, 10 ՀՈՒԼԻՍ, ՍՆՍՐԲ. Էներգետիկայի բնագավառում համագործակցության հարցերի լայն շրջանակ քննարկվեց հուլիսի 9-ին Էդուարդ Շեւարդնաձեի եւ «Իտերա» միջազգային էներգետիկ ընկերության նախագահ Իգոր Մակարովի հանդիպման ժամանակ. Ինչպես հաղորդում է Վրաստանի նախագահի լրատվական ծառայությունը, «Իտերա» ընկերությունը ռուսական «Գազարդ» բաժնետիրական ընկերության հետ համատեղ պատրաստ է երկարաժամկետ համաձայնագրով ոչ միայն Վրաստանի տարածով գազ փոխադրել Թուրքիա, այլ նաեւ գազով ապահովել Վրաստանին արտոնյալ պայմաններով: «Իտերան» մտադիր է նաեւ Վրաստանում որոշակի վերականգնողական աշխատանքներով: Համագործակցության կոնկրետ նախագծերը կմշակվեն Վրաստանի վառելիքի եւ էներգետիկայի նախարարության հետ համատեղ:

Հնդկական ռազմանավերի բարի կամքի այցը Չինաստան՝ չեղյալ

ԴԵԼԻ, 10՝ ՀՈՒԼԻՍ. ՍՐՍԵՆՊՐԵՍ: Հնդկաստանը չեղյալ է հայտարարել իր ռազմածովային ուժերի ռազմանավերի խմբի աշնանը նախատեսված բարի կամքի այցը Չինաստան, պատճառաբանելով «դրա համար անբարենպաստ իրադրությամբ», ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի թղթակցին հաղորդել է Հնդկաստանի մայրաքաղաքի մի դիվանագիտական աղբյուր: «Հարկ չկա գլուխ քարդել, թե ինչ պետք է հասկանալ «անբարենպաստ իրադրություն» դիվանագիտական ձեւակերպման տակ, նշել է աղբյուրը: Դելիում «չափազանց եւ ոչ մի բանով չարդարացված» են համարում Պեկինի հախուռն վերաբերմունքը մայիսին Հնդկաստանի անցկացրած միջուկային փորձարկումների նկատմամբ: Այստեղ այն կարծիքին են, որ մի երկիր, որն ինքը հսկայական միջուկային զինանոց ունի, պետք է առավելագույն զսպվածություն դրսեւորի ստեղծված իրադրության մեջ: Հնդկաստանի հասցեին Պեկինի ցասումնալից ճառասացությունները անհարկի են եւ երկերեսանիության տպավորություն են թողնում»:

Ճապոնիա. Երիտասարդների մշակութային հեղաշրջումը

Տեսգիտե ավելի ու ավելի մեծ թվով երիտասարդ ճապոնացիներ են նախընտրում ապրել ժամանակավոր եւ փոքր աշխատանքներով: Ոմանք էլ որպես կամավոր գործի են անցնում ոչ կառավարական միջազգային կազմակերպություններում, որոնց գործունեությունը ճապոնիայում ծավալվեց հատկապես Կոբեի երկրաշարժից հետո: Շատերը ճամփորդում են արտասահմանյան երկրներում, որպեսզի ծանոթանան իրենց հասակակիցների կյանքին: Սա ճապոնացի երիտասարդների սկսած մշակութային հեղաշրջումն է, որոնք ջանում են ձերբազատվել երկրի կրթական ու աշխատանքային համակարգերի պարտադրանքներից եւ իրենց ծնողների կերտած սպառողական հասարակությունից:

Ճապոնացիների նոր սերունդը նախընտրում է այսպես կոչված այլընտրական կյանքը: Երիտասարդներից մեկը, օրինակ, «էխպրես» հանդեսի թղթակցին գանգատվել է, որ ճապոնիայում մարդիկ սովորաբար ամբողջ կյանքում աշխատում են միեւնույն ձեռնարկությունում եւ փաստորեն ցմահ պարտկանում են նրան: Բացի դրանից, ձեռնարկատերը կարող է սեփական հայեցողությամբ աշխատակցին տեղափոխել որեւէ այլ աշխատանքի: Այդ երիտասարդը երրորդ կուրսից ընդհատել է իր համալսարանական կրթությունը եւ փող աշխատելու նպատակով դարձել մատուցող, միաժամանակ ձեւավորելով պատկերազարդ հանդեսներ: Նա ցանկացել է այդպիսով խզել կապերը ճապոնական մոդելի հետ, որը ենթադրում է ցմահ ծառայություն եւ առաջընթաց սպասի համեմատ:

Հայտնի հրատարակիչ Հիրոմիչի Կինուչին մասնավորապես նշում է. «Մենք փաստորեն մշտապես ապրել ենք կոլեկտիվ վերահսկողության համակարգում: Երիտասարդ շրջանավարտները խմբերով մուտք են գործում իրենց մասնագիտական կրթություն տված ձեռնարկություններ: Աշխատանքային որոշակի ժամանակաշրջանից հետո նրանք դառնում են պատասխանատու աշխատողներ, իսկ կարիերայի վերջում միասին անցնում են թոշակի: Ամեն ինչ ծրագրված է»: Կինուչին ներկայումս հրատարակում է «Արուբեյտո նյուզ» թերթը, որի բազմաթիվ էջերում զետեղվում են ժամանակավոր ու փոքր աշխատանքների առաջարկներ: Թերթը լույս է տեսնում 150 հազար օրինակ տպաքանակով եւ մեծ ժողովրդականություն է վայելում: Ինչպես նշում է Հիրոմիչի Կինուչին, ժամանակավոր աշխատատեղերի առատությունը ճապոնիայում գոյացել է տնտեսական բուռն վերելքի տարիներին, երբ աշխատուժի զգալի պակաս էր զգացվում, ուստի աշխատավարձերն ու ժամավճարները մեծ մասամբ սակարկվում էին: Այն ժամանակ բազմահազար երիտասարդներ սկսեցին այդպես ապրել եւ կամաց-կամաց դա մոդայիկ դարձավ:

1992 թ. ճապոնիայում սկսված տնտեսական անկումը խորացավ 1997 թ. աշնանը: Դրա հետեւանքով հիմնական աշխատատեղերի ավելցուկը կրճատվեց՝ նվազ հրապուրիչ դարձնելով ժամանակավոր աշխատանքի տեղերը: Ներկայումս ճապոնիայում գործազրկության մակարդակը կազմում է 4 տոկոս: Սակայն ճապոնական մոդելի խախտումը միաժամանակ փոխեց մարդկանց մտայնությունը: Երիտասարդները գիտեն, որ իրենք ապրելու են մրցակցային աշխարհում, ուստի պարտավոր են առավել նախաձեռնող լինել եւ արդյունավետ աշխատել: Մինչդեռ ճապոնացիների ավանդական ապրելակերպը ոչ թե նպաստում էր նախաձեռնության զարգացմանը, այլ ավելի շուտ խոչընդոտում էր:

Ճապոնացի երիտասարդները հարմարվեցին տնտեսական ճգնաժամի նոր պայմաններին: Ինչպես նշում է երկրի ժամանակավոր աշխատանքի առաջին ընկերության՝ «Պասոնայի» փոխնախագահ Մունեակի Ուեդան, ժամանակավոր գործերով ապրող երիտասարդներից շատերը նախընտրում են աշխատել պայմանագրով: Վերջինիս դեպքում վարձատրությունն ավելի բարձր է, քան մյուս ժամանակավոր աշխատանքների դեպքում:

Երիտասարդ ճապոնացիների այս նոր վարքագիծը հնարավոր դարձավ նաեւ ճապոնական համակարգի անընդունակության շնորհիվ: Փոքր ու ժամանակավոր աշխատանքների դեպքում գործատուները գրեթե զերծ են մնում հարկերից, իսկ նման աշխատանքների պահանջարկը բավական մեծ է հատկապես ուսանողների, տնային տնտեսուհիների եւ առհասարակ այն անձանց շրջանում, որոնք ուզում են գոյատեւել եւ խույս տալ գործազրկությունից: Այսպես, ուսանողներից շատերը ծախսի փոքր ունենալու նպատակով դասաժամերի հաշվին աշխատում են առեւտրի եւ սպասարկման ոլորտներում, շինարարությունում, ծխախոտ են վաճառում եւ այլն: Երիտասարդներից շատերը որեւէ աշխատանք գտնելու հույսով մեկնում են Լոնդոն, Նյու Յորք կամ Հոնկոնգ: Նրանց զգալի մասը չի էլ ուզում լսել ճապոնիա վերադառնալու մասին, որտեղ սոցիալական պարտադրանքները չափազանց շատ են:

Պ. Ք.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Արտիրոս Սարյանը Արարատում հանդիպելով կրտսեր Դանալանյանին, հետաքրքրվում է.

– Օնիկ, ի՞նչ է անում մեր Արամը՝ ավագ եղբայրդ: Օրեր առաջ Կարո Մելիքի (Կարո Մելիք-Օհանջանյան, ակադեմիկոս-Լ. Կ.) հետ եկել էին այս կողմերը՝ առակների եւ առածների համար նոր նյութեր գրի առնելու: Ես էլ էջյուղներ էի անում: Շատ էի ուզում նկարել, ինչքան համոզեցի՝ չհամաձայնեց: Ուրիշներն իրենք են խնդրում, որ նկարեմ: Շատ է համեստ: Մեծ գործ է անում. հավաքում, գրի է առնում, գիտական խոր ուսումնասիրության ենթարկում նյութը, այդ կերպ փրկում է ժամանակի ավերիչ ձեռից մեր բառն ու բանը: Ավելին էլ շատ բարձր է գնահատում նրան՝ թե՛ որպես մարդ եւ թե՛ որպես գիտնական:

Արամ Դանալանյանի մուտքը հայ բանագիտության անդաստանը մեծադղորդ խոստումներով չնշանավորվեց. նա ներս մտավ իբրեւ մի համեստ, ներհուն եւ լրջախոհ մտավորական եւ իր գործն անմիջապես սկսեց հրնաքաղ, պրպտուն, լուռ ու մունջ աշխատանքով՝ մշտապես խորհրդակցելով իր ուսուցիչների հետ: Առաջին գործը հայ ժողովրդական բանահյուսության մատենագիտության ստեղծումն էր, որ լինելով երկարատեւ տքնության արդյունք, դառնում է այն հաստատուն նախահիմքը, որի վրա նա խարսխեց իր գիտական պրպտումները: Սանուկ Աբեղյանի հետ մասնակցել է «Սասունցի Դավիթ» էպոսի հյուսվածո համահավաքի ծյուղերի կազմմանը, հրապարակել նրա պատմիչների կյանքն ու գործը: Սակայն երիտասարդ գիտնականի համար առավել հատկանշականը բանասիրության մինչ այդ չուսումնասիրված տեսակների հետազոտությունն էր. «Հայ ինականի աշխատանքի երգերը», «Ավանդապատում», «Առածանի», որոնցից յուրաքանչյուրը գիտական համահավաք թեմատիկ ժողովածու է՝ ներառված բանահյուսական տվյալ տեսակին վերաբերող առկա բլոր բնագիր նյութերը, գիտականորեն խմբավորված, դասակարգված եւ բնութագրված: «Հայ ինականի աշխատանքի երգերը» աշխատության համար խանհինգամյա կրտսեր գիտաշխատողն արժանանում է Մելքոնյան ֆոնդի մրցանակի: Մենագրությունը լույս է տեսնում հինգ լեզուներով: Ապա՝ հանրապետության պետական մրցանակ՝ «Սասունցի Դավիթ» էպոսի հոբելյանական հյուսվածո համահավաքի՝ «Դավիթ եւ Խանդութ», «Փոքր Մհեր» ծյուղերը կազմելու համար: Սակայն երիտասարդ գիտաշխատողի ստեղծագործական ձիրքերի իսկական փայլատակումը դարձավ «Առածանի» համահավաք գիտա-քննական ժողովածուն՝ ստեղծված կես դար առաջ, միակը՝ Արեւելքի եւ Արեւմուտքի երկրներում, թարգմանված եւ վերահրատարակված երկու տասնյակ անգամ եւ լեզուներով: Երբ «Առածանի» ենք ասում՝ հասկանում ենք Արամ Դանալանյան... Այն արարվել է հայ ժողովրդի առածների շքեղ ֆոնի վրա եւ մեջ: Բաղկացած է «Ներածությունից», առածների ստեղծման ժամանակը, բանաստեղծական լեզուն եւ արվեստը բաժիններից: Հեղինակը նշում է, որ ժողովրդական բանահյուսության մեջ հաճախ ենք հանդիպում սեղմ, պատկերավոր ասույթների, որոնք կազմված են մի քանի բառից կամ մեկ-երկու նախադասությունից, ունեն ամփոփ, ավարտուն միտք: Առածներն ունեն այլաբանական-փոխաբերական իմաստ, իրենց բովանդական միտքն արտահայտում են ոչ թե ուղղակի, այլ անուղղակի ձեւով, կյանքից ու բնությունից վերցրած պատկերներով ու օրինակներով. «Գեղ կանգնի, գերան կկոտրի», «Ասեմ՝ բոց կըլնի, չասեմ՝ խոց կըլնի», «Ունքը շինելու տեղ, աչքն էլ հանեց»: Առաջինում արտահայտված է այն գաղափարը, որ եթե ժողովուրդը միանա, կարող է մեծ գործեր կատարել, երկրորդում՝ որ եթե ճշմարտությունը բացահայտ ասվի, դրանից անախորժություն կստեղծվի, իսկ եթե բարձրաձայն չասվի, եւ մարդն իր մեջ պահի, ապա՝ հանգիստ չի ունենա: Երրորդում փոխաբերաբար ընդգծված է, որ մի լավ բան անելու համար մարդ ակամա կարող է վնասել եղած լավն ու առավել կարեւորը: Ի տարբերություն առածների, ասացվածքներում միտքն արտահայտվում է ուղղակի ձեւով, առանց այլաբանության. «Շատ մի սիրի՝ ատել կա, շատ մի ատի՝ սիրել կա», «Համբերությունը կյանք է», «Ով կարդա, նա մարդ ա»: Բանագետի կարծիքով առածներն ու ասացվածքներն ունեն ընդհանուր իմաստ՝ նաեւ: Դրանք ժողովրդի կենսափորձի վրա հիմնված իմաստուն եզրակացություններն են, խորհուրդներ ու երաշխավորություններ: Յուրաքանչյուր նոր սերունդ իր նախնիների իմաստուն ասույթները սովորում է եւ յուրացնում, միաժամանակ ինքն էլ նորերն է ստեղծում եւ հների հետ ավանդում հաջորդ սերունդներին: Մեր դասական եւ ժամանակակից գրողները իրենց ստեղծագործությունների մեջ վարպետորեն օգտագործել եւ օգտագործում են ժողովրդական իմաստնությունները, ձգտել ընդօրինակել նրանց լեզվի սեղմությանն ու պատկերավորությանը: «Ժողովրդական լեզվի ընտիր բառերը, սեղմ ու սերտ պատկերավոր ոճերը, նկատել է Հովհաննես Թումանյանը, էսօր արդեն ամենաթանգ զարդերն են հայ գրողների համար»:

Թերթում եմ կեսդարյա «Առածանին». ճանաչողական հատուկ արժեք են ներկայացնում սոցիալական թեմա ունեցող գործերը. «Տեղ կա սով է, տեղ կա ծով է»: «Մեկն ուտելով կմեռնի, մեկը՝ ուտելով», «Որն ունի Շահի-Շիրվան, որը չունի՝ խեղդվելու չվան»: Արձագանքելով հասարակական կյանքում գոյություն ունեցող այլանդակություններին՝ «Առածանիում» տեղ գտած առածները բողոք են հասարակական չարիքի դեմ. «Ուրիշին գրկելով հարստացողի վերջը փուչ է», «Կաղրի գրկվածը. չի ադրի գրկողը», «Ժողովուրդը ճնած աղուշ է, որ զարթնավ՝ էլ չի ճնի: Վախեցի՛ր»: Մռայլ ու արյունոտ են Հայաստանի պատմության նորագույն շրջանի տարեգրությունը պատկերող առածները, երբ մի ամբարտավանին փոխարինում է մյուսը, մի սատխոսին՝ երկրորդը, մի ստորին ու խաբեբային՝ երրորդը, յուրաքանչյուրն իր բաժինը լափում է ու հեռանում՝ շահարկելով «ժողովուրդ» բառը. «Ալին գնաց, Վալին եկավ», «Շեխը գնաց, Մահմադն եկավ», «Սաֆոն գնաց, Սերգոն եկավ», «Ամենքն ալ իրենց տոտրակին կը զոռան»: Շատ տարածված է «Մերը մանուկն ուրացավ»-ը, որ գործ է ածվել ու ածվում հասարակական մեծ արհավիրքի, թոհ ու բոհի, խառնակության ժամանակ, երբ մարդը մոռանում է մարդկայինը, հարազատը՝ հարազատին: «Դարիքի հացը լեռի ա» ասացվածքում շեշտված են օտարության մեջ գտնվող պանդուխտ աշխատավորի կյանքի դժնդակ պայմանները եւ շարունակությունը՝ «Դարիքը տուն չունի, հաց չունի, գերեզման էլ չունի»: Ժողովածուում բերված «Զգուշավոր եւ հեռատես» բաժնի առածները արդիական են եւ այսօր էլ չեն կորցրել իրենց հմայքը՝ «Շան հետ ընկերացիր, փեսը ձեռքիցդ մի գցի», «Ձիու առջեւից անցիր, շան՝ հետեւից», «Ոտքդ փակին պահե, որ վար չընկնիս»: Ժողովուրդը խելոքներին եւ անխելքներին այսպես է բնորոշել. «Գիտունի հետ քար քաշի, անգետի հետ փլավ մի ուտի», «Սարսաղ գլխի ձեռքից ոտները հավար կը կանչեն»: Իսկ լավի ու բարու արժեքը չիմացողները անարժան մարդիկ են, ծիծաղելի էակներ. «Էրն ի՞նչ գիտի՝ նուշն ինչ ա», «Խոզի գլուխը սեղանին են դրել, գլորվել, աղբն է ընկել»: Եվ, այնուամենայնիվ, լավն ու պիտանին չեն կորչի. «Լավություն արա, ջուրը գցի, ձուկը չիմանա, Աստված կիմանա», «Տաքած քարը գետնին չի մնա»: Հայկական բարձրավանդակի կենդանական աշխարհն իր ուրույն տեղն է գտել «Առածանիում». «Ոչխարի դմակը իրեն բեռ չէ», «Օձի գերեզմանը լագլագի փորն է», «Մի ծաղկից օձը թույն է շինում, մեղուն՝ մեղր»: Հայկական ժողովրդական առածների հետ ընդհանրություն ունեն ռուսների, ուկրաինացիների, ուզբեկների, տաջիկների գործերը: Օրինակ, «Մինչեւ ամոթը չգոռա, ասված-ասված չեն ասի», «Կայծակը մինչեւ չխփի, մուժիկը երեսը չի խաչակնքի»: Բարոյական հարվածի անբուժելիության մասին մենք ընդհանրություն ունենք չինացիների, լեհերի, բուլղարացիների, հրեաների, հույների, պարսիկների եւ հնդիկների հետ. «Շատ ադրոը բան չի իմանա, շատ մաղ եկողը կիմանա», «Կոհիր երկաթը, քանի դեռ տաք է»: Պատմությամբ ապացուցված է հայի աշխատասիրությունն ու շինարար ոգին, որի շնորհիվ նա կարողացել է իր ներդրումը մտցնել համաշխարհային մշակույթի գանձարանը: Ժողովրդի խառնվածքի այդ ինքնատիպ գիծը հատուկ ընդգծված է «Առածանու» մեջ. «Շեռքը բան, ոտքը՝ գերեզման», «Հայն ընչանք չբեզարի, չի նստի»:

Մի անգամ ես նշեմ, որ ակադեմիկոս Դանալանյանի «Առածանու» ամենամեծ հատկությունը նրա պարզությունն է, քիչ խոսքով շատ բան ասելը, յուրաքանչյուր առածի մեջ «գրքով մեկ խելք ու զգացմունք տեղավորելը»: Հազարավոր առածները տարբերակներով, որոնց ժամանակը որոշելու համար պետք է ծեղքել նոցա այբբենական կեղեւը, թափանցել բովանդակության խորքը, դասդասված են ըստ հիմնական իմաստի եւ սոցիալական բովանդակության: Հենց դա էլ կոչվում է Դանալանյան մեթոդ:

ԷՄԻԼԻԱ ԳԱՆՑԱՆ

«Հայկական առածանին» 50 տարեկան է

«Շատ մեծ գործ է արել Արամ Դանալանյանը: Նա տվել է հայ ժողովրդի մտքի հանճարի, հոգեկան եւ ֆիզիկական ուժերի ու բնազդի պատմությունը, պայքարի եւ շինարար գործի տարեգրությունը, իր հերոսին ժողովրդին դնելով առածների շքեղ ֆոնի մեջ»:

Դերենիկ Դեմիրճյան



Հայրենի խմբագրություն

Հաճախ եմ թղթակցել «Ազգին» եւ մեծ պատիվ համարել Ձեր թերթում տպագրվելը: Ինձ համարել եմ «Ազգի» մշտական ընթերցողն ու բարեկամը: Սակայն բնավ չէի պատկերացնում, որ ոչ ծավալուն հոդվածս 20 օր մնալուց հետո տպագրվելու է Ձեր թերթի մշակութային էջի պատասխանատու, երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու Թ. Հովհաննիսյանի եռապատիկ, մեծ «պատասխանով»: Երեւի այդ ընթացքում նա երկնում էր «պատասխանը»: Բնավ չէի պատկերացնում եւ մտահոգված եմ, որ Ձեր թերթի աշխատակիցը, այն էլ մշակութային էջի պատասխանատուն, արգելում կամ դատապարտում է տեսակետ հայտնողին եւ առաջարկություն անողին, մշակույթը համարելով իր «բոստանը»: Ինչ տիպի՞ լայնախոհություն: «Տհաճ ներանձնական վիճակ», որ վնասում է «Ազգին» ու զարմացնում ընթերցողին եթե Չեխովի ժամանակակիցը լիներ, պատկերացրեք, ինչպես էր սաստելու նրան գրական գործունեությամբ զբաղվելու համար, ինչպես է հանդուրժում Զ. Բալայանին լրագրությամբ զբաղվելու (արժե ուրիշ անուններ մեջբերել անցյալից ու ներկայից): Արտահայտությունների փոխաբերական իմաստն էլ, կարծում եմ, դիտավորյալ չի ընկալում («տեր» անմիջապես սեփականաշնորհում է հասկանում, «նվաճել» անմիջապես պատերազմ եւ զավթում, իրոք, «տխուր ներանձնական վիճակ է»). շարադրանքն էլ վայրիվերո, այնքան է շեղվում բուն նյութից պոռնիկներից հասնելով «Մեծաքոր եւ Սոսիկ Արեւելքը հայրենաբաղծության արտահայտչ ալիքներով ցնցող պարի պեսական անսամբլ»: Ի դեպ, երկարաշունչ նախադասություններն ու բազմաբնակ ածականների առատությունը դեռեւս խոսքի եւ լեզվի կատարելություն չեն, ինչպես հայտնի է հազարամյակներ ի վեր:

Ըստ երաժշտագետ, արվեստագիտության թեկնածուի մտքերն Օհան Դուրյանը բնավ «օտարված չէ» եւ դրա բազում ապացույցներից է համարում ամերիկյան համալսարանի եւ Ա. Խաչատրյանի համերգատարաններում պարբերաբար տրվող նրա համերգները: Հարց է ծագում. ինչո՞ւ ամերիկյան համալսարանում, հարմա՞ր է այն սիմֆոնիկ երաժշտության համար, ինչո՞ւ սակավաթիվ համերգներ Ա. Խաչատրյանի համերգատարանում, հաճված համերգներ (այլ ոչ մշտական) ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ: Ո՞վ պետք է լիներ լավագույն նվագախմբի գեղարվեստական ղեկավարը, եթե ոչ Օհան Դուրյանը: Երաժշտագետ, արվեստագիտության թեկնածուն սա համարում է երիտասարդ, տաղանդավոր հերթափոխի անտեսո՞ւմ: Մշակույթի ասպարեզում հրաշք գործող եւ հավասարը չունեցող մեծության տարիքը ինչո՞ւ է անհանգստացնում արվեստաբանին, չէ՞ որ երիտասարդները մեծահամբավ մաեստրոյից շատ բան ունեն սովորելու:

Տկն Թամարը երբեւէ եղե՞լ է մեծանուն դիրիժորի փորձերին, տեղյա՞կ է, թե ինչ աշխատանքային պայմաններում է ստեղծագործում, երբեւէ մտահոգություն արտահայտե՞լ է: Հարցեր, որ պետք է հատկապես մտահոգեին լրագրողին: Ճշմարիտ արվեստաբանը պետք է գնահատեր նաեւ ծանր օրերին Ճգնավորյանի գործունեությունն, իսկ այսօր մտահոգվեր նրա բացակայությունից:

Իմ փոքրիկ հոդվածում խոսք է եղել արժեքների համադրման, բոլորի անհրաժեշտության, համագործակցության գաղափարի ու մանավանդ յուրաքանչյուրին ըստ արժանիքների գնահատելու երեւույթի մասին: Խիստ անհասկանալի է, թե ինչո՞ւ է տկն Թամարն ընդգծում համագործակցության առաջարկի դեմ եւ անվանում «չհաջողված կադրային քաղաքականություն»: Իմ ասածն էլ այդ է. ճիշտ մշակութային քաղաքականության վճռական եւ գործնական քայլերի դեպքում այդ համագործակցությունը կհաջողվեր: Համագործակցության գաղափարի՞ն է դեմ տկն Հովհաննիսյանը, թե՞ դեմ է նրան, որ մտահոգություն արտահայտողն ու առաջարկությամբ հանդես եկողը երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու չէ, այլ երաժշտաստեղծ բժիշկ: Մշակույթն այնքան նեղ ու սահմանափակ չէ, որքան տկն երաժշտագետն է պատկերացնում, բժշկությունն ու բժիշկն էլ բոլորովին մշակույթից դուրս չեն: Ինչ վերաբերում է առողջապահությունում եւ կյանքի մնացած բոլոր ոլորտներում տիրող իրավիճակին, ի տարբերություն տկն Թամարի, այսպես եմ մտածում. ամեն ոք կարող է հանդես գալ առողջ քննադատությամբ, կարողության դեպքում նաեւ առաջարկով. դա բոլորիս օգտին է:

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԱԵՂՐԱԳԱՐՁ

Պատասխան «Ազգի» մշակութային էջի պատասխանատուին

ՀՈԲԵԼՅԱՐ



digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

Եվրագավաթների մրցաշարի շեմին. «Երևան»

Հարցազրույց «Երևան» ֆուտբոլի ակումբի նախագահ Կարեն Հարությունյանի հետ

Կ. Հարությունյանի հետ հանդիպեցինք թիմի ուսումնամարզական հավաքի ժամանակ:

– Մեր թիմը ներկայումս ակտիվորեն նախապատրաստվում է Չեմպիոնների լիգայի եւ ներքին առաջնության հանդիպումներին: Թիմը կոնկրետ խնդիրներ ունի եւ գլխավոր մարզիչ Սամվել Դարբինյանի ղեկավարությամբ կձգտի դրանք իրականացնել: Վերջերս թիմի նախապատրաստման մեջ մենք ստիպված եղանք որոշ փոփոխություններ մտցնել եւ այն անցկացնել Երեւանում:

– Արդյոք թիմում սպասվո՞ւմ են փոփոխություններ:

– Նախ ասեմ, որ մեր թիմի կազմում, հնարավոր է, այլեւս չխաղա Վարազդաս Ավետիսյանը, որը Բելգիայի ակումբներից մեկի հրավերն է ստացել: Արտասահման է մեկնելու նաեւ Հարություն Աբրահամյանը: Ներկայումս բանակցություններ են վարվում Իրանի ազգային հավաքականի նախկին ֆուտբոլիստներ Սամսոն Պետրոսյանի եւ Էդմոնդ Վազիկի հետ: Ասեմ նաեւ, որ բանակցություններ են վարվում Ժան-Պիեռ Պարենին «Երեւանի» կազմում ընդգրկելու մասին, թեկուզ եւ ոչ երկար ժամկետով: Հնարավոր է նաեւ, որ «Երեւանի» համազգեստը հագնի նաեւ մեզ բոլորիս քաջածանոթ Էրիկ Ասադուրյանը: Այնպես որ, ինչպես տեսնում եք, փոփոխությունները նախատեսվում են: Կարելի է ասել, որ ակումբը կորցնում է իր առանցքային խաղացողներից շատերին, բայց մենք չենք ցանկանում զրկել նրանց միջազգային հեռանկարներից, թեկուզ եւ նրանցից որոշանք ուղղակի անփոխարինելի են մեր համար: Բայց նշեմ, որ նրանք բոլորը Եվրագավաթի խաղը կանցկացնեն:

Խոսելով ֆինանսական կողմի մասին, ասեմ, որ ակումբը շատ խիստ մշակված քաղաքականություն է վարում: Օրինակ, մալիացի Մալալին մենք չէինք շտապում վաճառել եւ, որպես արդյունք, այսօր նրան գնելու համար մի քանի եվրոպական ակումբների միջեւ պայքար է գնում, իսկ առաջարկվող գումարները շատ անգամ գերազանցում են ժամանակին նրա համար վճարած մեր գումարը: Նույնը վերաբերում է նաեւ այլ խաղացողների: Ի դեպ, նշեմ, որ Մալալն իրոք շատ բանով նպաստեց մեր թիմի հաջող ելույթներին եւ իր հացը ձրի չէր ուտում:

Ինչ վերաբերում է Հայաստանի ֆուտբոլիստների արտահանման գործընթացին ի սկզբանե պետք է ճիշտ ձեւ ընտրվի, ինչպես, օրինակ, դա արվեց Վրաստանում:

Ես կցանկանայի հատուկ նշել ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի դերը: ՀՖՖ նորընտիր նախագահ Երեւանի քաղաքապետ Սուրեն Աբրահամյանը շատ ակտիվ է աշխատում մեր ֆուտբոլի վիճակը բարելավելու ուղղությամբ: Նա արդեն խոստացել է ակումբներին մարզադաշտեր տրամադրել մարզումների համար եւ լուծել Հոլանդիայի մարզադաշտի հարցը: Իսկ դա արդեն հսկայական օգնություն կլինի: Մի կարծեք, թե ֆուտբոլիստները ձգտում են հավաքներն անպայման դրսում անցկացնել: Մենք հաճույքով կմարզվենք նաեւ այստեղ, եթե նման պայմաններ լինեն:

– Վերջերս որոշում կայացվեց, որ ամեն մի թիմ պետք է իր փոխարինող, կամ երկրորդ, այսպես ասած, պահեստային թիմն ունենա:

– Սա ճիշտ որոշում է, քանի որ պետք է մտածել ապագայի մասին, բայց, իմ կարծիքով, այս դեպքում պետք է խոսել նաեւ մանկապատանեկան մարզադպրոցների զարգացման մասին: Եթե տարբեր ձեւով փորձում ենք նպաստել այդ հարցին Օրինակ, պայմանավորվածություն կա «Բորդոյի», «Այաքսի» եւ այլ հանրաճանաչ ակումբների հետ մեր երեխաների խմբեր ուղարկել այնտեղ իրենց մոտ 5 տարի մարզվելու համար: Իհարկե, օգուտը փոխադարձ կլինի: Բոլոր դեպքերում, սա էլ մի ձեւ է: Իսկ, ընդհանրապես, ֆուտբոլը մեզ մոտ կզարգանա միայն այն դեպքում, երբ պետությունը համապատասխան օրինադրաշտ եւ պայմաններ կստեղծի ֆուտբոլի զարգացման համար:

Նշեմ նաեւ, որ մենք շատ ակտիվ զարգացնում ենք մեր միջազգային կապերը եւ հաջողության ենք հասնում տարբեր առումներով: Օրինակ, մենք պայմանագիր կնքեցինք գերմանական «Պումա» հանրահայտ կոնցեռնի հետ եւ այս ֆիրման տարեկան 35 հազար դոլարի մարզահագուստ մեզ կտրամադրի: Սա եզակի դեպք է եւ լավ օրինակ:

Մենք հույս ունենք, որ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նորընտիր ղեկավարությունը կօգնի ակումբներին միջազգային օգնություն ստանալ: ՖԻՖԱ-ն եւ ՈՒԵՖԱ-ն, օրինակ, կարող են նաեւ շատ ձեռնտու վարկեր տրամադրել: Մի խոսքով, շատ բան կարելի է անել:

– Մեր ֆուտբոլի ընդհանուր վիճակի ֆոնի վրա դուք լավատեսորեն եք տրամադրված:

– Ես լավ եմ հասկանում իմ գործընկերներին, ակումբները ծանր ֆինանսական վիճակում են: Ի դեպ, մի կարծեք, թե մեր առջեւ պրոբլեմներ չկան: Հաճախ նաեւ սուբյեկտիվ բնույթի: Երբ մեզ ուղղակի ցանկանում են խանգարել: Շատ անհասկանալի եւ ցավալի մի երեւույթ, որը նույնիսկ անտրամաբանական է, քանի որ մի առանձին ակումբի առաջընթացը նույնպես մեր ֆուտբոլի ընդհանուր շահի գրավականն է:

Հարցազրույցը վարեց
ԱՐՄԵՆՊՐԵՍԻ թղթ
ՀԱՎԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

ԹԵԹԵՎ ԱՏԼԵՏԻԿԱ

Ով կտանա 1 մլն դոլար

Նորվեգիայի մայրաքաղաք Օսլոյում անցկացվում է թեթեւ atլետիկայի Չեմպիոնների լիգայի (հաճախ այն «Ոսկե լիգա» են անվանում) մրցումների փուլը: Շարքի մրցանակային ընդհանուր հիմնադրամը 5 մլն դոլար է: Նախատեսվում է 1 մլն դոլար վճարել այն մարզիկին, որն իր մրցաձեւում հաղթող կդառնա բոլոր 6 փուլերում: Այդ հեռանկարից արդեն զրկվեց աշխարհի վեցակի չեմպիոն Սերգեյ Բուբկան (Ուկրաինա), որը չկարողացավ հաղթել ձողացատկի մրցումներում: Սակայն խոշոր պարգեւավճարի հույսեր ունեն Մերիոն Ջոնսը (ԱՄՆ), Սվետլանա Մաստերկովան (Ռուսաստան), որոնք համապատասխանաբար հաղթեցին 100 եւ 1500 մետր վազքատարածություններում: 3000 մետրում հաղթեց եթովպացի Հայլե Գեբրասելասիեն: Նա շատ էր ցանկանում առաջին տեղ գրավել աշխարհի ռեկորդով, սակայն դա նրան չհաջողվեց: Նշենք, որ նա այս տարի արդեն թարմացրել է ռեկորդները 5000 եւ 10000 մետր վազքատարածություններում:



Առջեւում Գեբրասելասիեն է

ԲՈԼՇՔԱՍՄԱՐՏ

Հոլիֆիլդը վախենո՞ւմ է

Էվանդեր Հոլիֆիլդ

Հանրահայտ բոքսֆամարտիկ, ծանր քաշում աշխարհի չեմպիոն, ամերիկացի Էվանդեր Հոլիֆիլդը հրաժարվում է մրցել մեկ այլ չեմպիոնի՝ անգլիացի Լենոքս Լյուիսի հետ: HBO հեռուստաալիքը Հոլիֆիլդին առաջարկել է 20 մլն, Լյուիսին՝ 10 մլն դոլար: Վերջինս համաձայն է դրան, իսկ Հոլիֆիլդը, պահանջելով ավելացնել պարգեւավճարը, հրաժարվում է մրցել անգլիացու հետ: «Եթե բոլորն ասում են, որ մեր մենամարտը վերջին տասնամյակի ամենավառ երեւույթն է լինելու, ապա կազմակերպիչներն ավելի առատաձեռն պետք է լինեն»: Նա ասում է, որ պատրաստ է սպասել թեկուզ մինչեւ 2000 թվականը, մինչեւ որ իրեն արժանի գումար գտնվի:

Լյուիսի մենեջեր Ֆրենկ Մաքնին իր կարծիքն ունի այդ առնչությամբ: Նա հայտարարել է, «Հոլիֆիլդը պարզապես վախենում է պարտվել: Նա հասկանում է, որ Լենոքսի հետ մենամարտը կարող է իր օգտին չավարտվել»:

ԹԵՆԻՍ

«Լավ սկիզբը լավ նշան է»

Ուիմբլդոնի խոշոր մրցումներից հետո թենիսիստներն այժմ հանդես են գալիս ԱՄՆ-ում եւ Եվրոպայում անցկացվող մրցաշարերում:

Մեզ հատկապես հետաքրքրում է ԱՄՆ-ի Նյուփորտ քաղաքում սկսված մրցաշարը, քանի որ այստեղ հանդես է գալիս երեւանցի Սարգիս Սարգսյանը: Հիշեցնենք, որ Սարգսյանն անցյալ տարի հաղթեց այդ մրցումներում: Նա այս անգամ եւս, ինչպես նախորդ մրցաշարում, առաջին տուրում պարտության մատնեց կանադացի Դանիել Նեստորին (6–7, 6–1, 6–4): Ինչպես խաղից հետո ասաց Սարգիսը, ինքը սնահավատ չէ, բայց լավ սկիզբը լավ նշան է: Սարգսյանը, որը համաշխարհային դասակարգման ցուցակի 64-րդ տեղում է, Նյուփորտի մրցաշարում հանդես է գալիս չորրորդ համարի տակ:

Բավականին ուժեղ կազմ է հավաքել Շվեյցարիայի Գստաադ քաղաքում անցկացվող մրցաշարը, որի մրցանակային հիմնադրամը 525 հազար դոլար է:

Արդեն որոշվել են քառորդ եզրափակիչ խաղերի բոլոր մասնակիցները: Նրանց թվում են չորս իսպանացի թենիսիստներ՝ անցյալ տարվա Շվեյցարիայի բաց առաջնության հաղթող Ֆելիխս Մանտիլյան, Ալեխս Կարեոյան, Ալբերտո Կոստան, Ֆրանսիսկո Կլավետը, ինչպես նաեւ Ֆիլիպ Դեվոլֆը (Բելգիա), Մարսելո Ռիոսը (Չիլի), գերմանացիներ Նիկոլաս Կիֆերը եւ Բորիս Բեկերը: Գստաադի մրցախարի առաջին իսկ տուրում անհաջողության մատնվեց նմանօրինակ մրցումներում 1995 թ. հաղթող դարձած եվգենի Կաֆելնիկովը (Ռուսաստան): Նա պարտություն կրեց բրազիլացի Ֆեռնանդո Մելիգենիից:

Շվեդիայի Բոսքադ քաղաքում անցկացվող մրցումները եւս վճռական փուլ են թեւակոխել:

Այստեղ մասնագետները նշում են իտալացի Անդրեա Գաուդենցիի եւ մարոկկացի Քարիմ Ալամիի հաջող խաղը, որոնք իրենց հերթական հանդիպումներում առավելության հասան համապատասխանաբար Ռուան Անտոնիո Մարինի (Կոստա Ռիկա) եւ Ֆեռնանդո Վիսենտեի (Իսպանիա) նկատմամբ:

Բորիս Բեկեր

Կանայք մրցում են Պրահայում անցկացվող Չեխիայի բաց առաջնությունում: Հերթական փուլում Սանդրին Թեսպյուն (Ֆրանսիա) հաղթեց Դանիելա Հլադկովային (Չեխիա), Միլվիա Ֆարինան (Իտալիա)՝ Օսա Կաղլտոնին (Շվեդիա), Հենրիետա Նադիովան (Չեխիա)՝ Աննա Սմաշնովային (Իսրայել), Միկան Շագնեսին (ԱՄՆ)՝ Վիրխինիա Ռուանա Պասկուալեին (Իսպանիա), Ամելի Մորիսոն (Ֆրանսիա)՝ Ելենա Մակարովային (Ռուսաստան), Նատալյա Զվերեւան (Բելառուս)՝ Միխայելա Պասեկովային (Չեխիա):

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՌԱՇՏԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

Աշխարհի չեմպիոնը կորոշվի վաղը

Ֆրանսիայում անցկացվող աշխարհի 16-րդ առաջնությունը ավարտվում է. մնացել է անցկացնել ընդամենը երկու խաղ: Այսօր Փարիզում 3-րդ տեղի համար կխաղան Հոլանդիայի եւ Խորվաթիայի հավաքականները: Իսկ առաջնության գլխավոր խաղը կանցկացվի վաղը. Սեն Դենիում: Չեմպիոնի կոչումը կվիճարկեն Ֆրանսիայի եւ աշխարհի քառակի չեմպիոն Բրազիլիայի հավաքականները: Մասնագետները ավելի բարձր են գնահատում Բրազիլիայի հավաքականի հնարավորությունները՝ նշելով, որ այն ավելի հավասարակշռված կազմ ունի, ինչպես նաեւ այնտիսի ֆուտբոլիստներ, որոնք ի վիճակի են հաղթել ցանկացած թիմի: Ֆրանսիայի հավաքականն աչքի է ընկնում կոլեկտիվ խաղով, սակայն նա չունի բարձրակարգ հարձակվողներ: Այդ բացը զգացվեց հատկապես վերջին խաղերում: Վերջիվերջո ո՞վ կհաղթի: Եկեք գուշակություններ չանենք եւ հետեւենք ֆուտբոլային ներկայացման վերջին գործողությանը:

Հրաժեշտ են տալիս հավաքականին

Դանիայի հավաքականում այլեւս չխաղալու մասին է հայտարարել թիմի առանցքային խաղացողներից մեկը՝ 29-ամյա հարձակվող Բրայան Լաուդրուպը: Եթե նրա եղբոր՝ 34-ամյա կիսապաշտպան Միխայելի ֆուտբոլիստի կարիերային ընդհանրապես հրաժեշտ տալու մասին մտադրությունը հայտնի էր բոլորին, ապա Բրայանի անսպասելի հայտարարությունը զարմացրեց շատերին: Իսկ Դանիայի արտաքին գործերի նախարարը հայտարարեց. «Ես չափազանց վշտացած եմ, որ Միխայելից հետո Բրայանը եւս դադարեցնում է ելույթները հավաքականում: Նրանց տեղ ծագործ ներուժին փոխարինելը դժվար կլինի»: Ավելացնենք, որ Լաուդրուպ եղբայրների հեռանալով մի ժամանակաշրջան է ավարտվում դանիական ֆուտբոլում: Դանիայի հավաքականն իր ամենախոշոր հաջողությանը հասավ 1992-ին, երբ նվաճեց Եվրոպայի չեմպիոնի կոչումը: Ֆրանսիայում նույնպես դանիացիները վատ չխաղացին: Նրանք տեղ գրավեցին ուժեղագույնների թվում:

Իտալիայի հավաքականի ավագ Պաոլո Մալդինին, հավանաբար այլեւս հանդես չի գա հավաքականում: Այն բանից հետո, երբ քառորդ եզրափակիչում իտալացիները լրացուցիչ նշանակված 11 մետրանոց հարվածաշարից հետո պարտվեցին ֆրանսիացիներին, Մալդինի-կրտսերն ասաց, որ իրենց հավաքականի բախտը չի բերում նման դեպքերում: Իտալացիները զիջեցին արդեն 3-րդ անգամ (1990-ին կիսաեզրափակիչում, 1994-ին եզրափակիչում): «Սա իմ 93-րդ խաղն էր հավաքականի կազմում, ասել է 30-ամյա Մալդինին, ու եթե բախտս չի բերում ճակատագրերեն, գուցե տեղս զիջեմ ուրիշին»:

Փարիզ. Ֆրանսիա-Խորվաթիա խաղից հետո

digitised by A.R.A.R.@

ԱՅԺ

Սերոֆլոտի տնօրենը ժամանում է Երևան

Վալերի Օկուլովը նախագահ Բորիս Ելցինի փեսան է

Երկուշաբթի լույս գիշերը Երևան է ժամանում Սերոֆլոտ բաց բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն ու նախագահ, Ռուսաստանի ավիացիոն դաշնային ծառայության կոլեգիայի անդամ Վալերի Օկուլովը:

Վալերի Միխայլովիչ Օկուլովը ծնվել է 1952 թ. ապրիլի 22-ին Կիրով քաղաքում: 1975 թ. ավարտել է քաղաքացիական ավիացիայի ակադեմիան՝ ծառայագետ-շտուրմանի մասնագիտությամբ: Եղել է «Ան-24», «Ան-12», «Տու-154» օդանավերի շտուրման, Սվերդլովսկի միացյալ ավիաջոկատի «Տու-154» օդանավի շտուրման-հրահանգիչ:

1985 թ. ԽՍՀՄ քաղաքացիական ավիացիայի նախարարության միջազգային օդային հաղորդակցությունների կենտրոնական վարչությունում էր՝ «Տու-154», «Իլ-86» ինքնաթիռների շտուրման, ավիացիոն անձնակազմի պատրաստման կենտրոնի առաջատար շտուրման-դասիարակ: 1996 թ. օգոստոսին դարձել է Սերոֆլոտի գլխավոր տնօրենի առաջին տեղակալ՝ արտադրական գործունեության կազմակերպման ու կառավարման գծով, Սերոֆլոտ բաց բաժնետիրական ընկերությունում պետության ներկայացուցիչների կոլեգիայի անդամ է: 1997 թ. մարից մինչեւ մայիսը եղել է Սերոֆլոտի գլխավոր տնօրենի պաշտոնակատարը: 1997 թ մայիսի 30-ի բաժնետերերի ժողովի որոշմամբ ընտրվել է Սերոֆլոտի տնօրենների խորհրդի անդամ ու նշանակվել Սերոֆլոտ բաց բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն:

Առաջին կարգի մասնագետ է:



Պարգեւատրվել է «Անվթար թռիչքների համար» եւ «Սերոֆլոտի գերազանցիկ» կրծքանշաններով:

Ամուսնացած է, կինը Ռուսաստանի Դաշնության նախագահ Բորիս Ելցինի ավագ դուստրն է: Ունի 4 երեխա:

Սերոֆլոտի ղեկավարը կմասնակցի ավիաընկերության Երեւանյան նոր գրասենյակի բացման արարողությանը, բանակցություններ կվարի «Հայկական ավիաուղիներ» ավիաընկերության գլխավոր տնօրենը: Սերոֆլոտի ներկայացուցչությունը Հայաստանում բացվել է 1994 թ. հուլիսին, իսկ ավիաընկերության առաջին թռիչքը տեղի է ունեցել 1994 թ. հոկտեմբերի 31-ին: Այսօր Սերոֆլոտն ունի Երեւան իրականացվող շաբաթական 8 թռիչք, մեզ հայտնեց ընկերության Հայաստանի ներկայացուցիչ Գ. Ղահրամանյանը: Նա հիշեցրեց, որ անցյալ տարի Սերոֆլոտը Մոսկվա-Երեւան-Մոսկվա չվերթերով փոխադրել է 80 հազար ուղեւոր:

Այսօր Սերոֆլոտում աշխատում են շատ հայեր: Վերջերս Լոնդոնում ավիաընկերության գլխավոր ներկայացուցիչ է նշանակվել Յուրի Մնացականովը, որը 1992-93 թթ. ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետն էր, իսկ 1997 թ. «Հայկական ավիաուղիներ» ավիաընկերության գլխավոր տնօրենը: Սերոֆլոտի կոմերցիոն տնօրենի խորհրդականը Մոսկվայում ՀՀ նախկին մշտական ներկայացուցիչ, իսկ հետո Գերմանիայում ՀՀ դեսպան Ֆելիքս Մամիկոնյանն է, որն առաջին 6 դիվանագետներից է, ում 1992 թ. հուլիսին շնորհվել էր արտակարգ ու լիազոր դեսպանի «հայաստանյան» դիվանագիտական աստիճան:

ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ
ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակից
«Ազգի» համար

ԱԶԱՏԱՄԱՐՏ

Տարբեր մեդալներով պարգեւատրվեցին 32 մարտիկներ, որոնցից 12-ը՝ հետմահու

ԵՐԵՎԱՆ, 10 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: ՀՀ նախագահի մայիսի 27-ի հրամանագրով տարբեր մեդալներով պարգեւատրվել են Հայաստանի սահմանների պաշտպանության մարտերին եւ Արցախի հերոսամարտին մասնակցած 32 անձինք, որոնցից 12-ը՝ հետմահու: Հուլիսի 10-ին տեղի ունեցավ պարգեւների հանձնման արարողությունը:

Հանձնելով պարգեւները՝ ՀՀ Աժ փոխնախագահ, «Երկրապահ» կամավորականների միության փոխնախագահ Ալբերտ Բազեյանը եւ ՀՀ պաշտպանության փոխնախարար Աստվածատուր Պետրոսյանը նշեցին, որ իրենք մարտերի մասնակիցներին եւ նրանց ծնողներին են հանձնում պարտքի իրենց բաժինը: «Արիության համար» մեդալով հետմահու պարգեւատրվեցին 12 մարտիկներ, ինչպես նաեւ 7 երիտասարդներ Հայաստանի տարբեր գյուղամասերից: «Մարտական ծառայության» մեդալի արժանացան 6 մարտիկներ, որոնցից 3-ը կանայք են: Իսկ պարգեւատրվողներից 7-ը արժանացան «Մարտական Բաղրամյան» մեդալի:

Արարողության ժամանակ գրող Գրիգոր Զանիկյանն ընթերցեց Ֆրանսիայում ցմահ բանտարկության դատապարտված Վարուժան Կարապետյանի ուղերձը եւ երկրապահներին փոխանցեց Հայաստանի կամավորներին նվիրված Արարատ լեռը պատկերող գեղանկարչական աշխատանքը, որ Վ. Կարապետյանը հեղինակել է բանտում:

Ի դեպ, իր ուղերձում Վարուժան Կարապետյանը նշել էր, որ ես է վերադարձնում «Երկրապահ» կամավորականների միության անդամատոմսը, քանի որ ներկայումս գտնվելով բանտում եւ զրկված լինելով համազգային դարավոր երազանքների իրականացմանը մասնակցելու հնարավորությունից, իրեն իրավունք չի վերապահում այդ միության անդամը լինել:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Ադրբեջանում հիշել են եռակողմ հանձնաժողովի մասին

ԵՐԵՎԱՆ, 10 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Ադրբեջանի փոխվարչապետ Աբաս Աբասովը պնդում է, թե Ադրբեջան-Հայաստան-Ռուսաստան եռակողմ հանձնաժողովի աշխատանքը ներկա պահին կանգ է առել, հաղորդում է ANS-press գործակալությունը: Հանձնաժողովն ուսումնասիրում էր այն հարցը, թե արդյոք Ռուսաստանը Հայաստանին աջակցելի է զենք մատակարարել: Ըստ Աբասովի, Ռուսաստանի կառավարության հայտնի փոփոխություններից հետո Մոսկվան դեռեւս չի նշանակել հանձնաժողովի համանախագահ: Թեեւ Ադրբեջանը ռուսական կողմին հիշեցրել է այդ խնդիրը, սակայն պատասխան դեռեւս չկա: Ըստ Աբասովի, պաշտոնական Բաքուն բացասաբար է գնահատում այդ անտարբերությունը եւ, եթե այդպես շարունակվի, ապա Ադրբեջանը հարկադրված կլինի դիմել միջազգային կազմակերպությունների օգնությանը:

Ադրբեջանի կառավարությունն էլ կվաճառի պետական ընկերություններ

ԵՐԵՎԱՆ, 10 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Ադրբեջանի բյուջեի ծգնաժամը կառավարությանը ստիպում է մտածել պետական ունեցվածքի կարգավիճակ ունեցող ընկերություններից մի քանիսը մինչեւ տարեվերջ վաճառելու մասին, հուլիսի 9-ին հայտնել է պետական սեփականության հարցերով հանձնաժողովի պաշտոնյաներից մեկը: Ըստ «Ազատություն» ռադիոկայանի, պաշտոնյան չի բացառել, որ այդպիսի ընկերությունների թվում կարող են հայտնվել հեռախոսային կապի ու գազի մատակարարման ընկերությունները: Ադրբեջանական օրենքների համաձայն, ռազմավարական նշանակության ընկերությունները կարելի է սեփականաշնորհել միայն նախագահի հրամանագրով:

«Ալիեւի իշխանությունը երբեք այսման թույլ չի եղել»

ԲԱՔՈՒ, 10 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կառավարող իշխանությունը ի՞նչ տվեց երկրին: «Ենի մուսավաթ» թերթը գրում է, որ ոչինչ չտվեց, բացի վնասից ու մարդասիրական օգնությունից: Հեղինակի կարծիքով, այս տարի Ադրբեջանում իշխանության գլուխ կանգնեն ազգային ուժերը: Քաղաքական ասպարեզում սպասվում է ընդդիմադիր ուժերի եւս մի այլընտրական ուժի հայտնվելը: Թերթը գրում է, որ արդեն հասել է ընտրությունների ժամը: Ընդդիմության համար օրինական հնարավորություններ են ի հայտ գալիս: Հողվածագրի կարծիքով, եթե իշխանությունները նույնիսկ ուզենան էլ, միեւնույն է, չեն կարող խանգարել ընդդիմությանը եւ ժողովրդական առաքելությանը: Փուլերից մեկում իշխանությունն այնքան կթուլանա, որ ուժերի միջեւ եղած տարբերությունը կդառնա ակներեւ, եւ այդժամ կառավարող իշխանությունը դրությունից դուրս գալու համար ստիպված կլինի ընդդիմությանը հրավիրել բանակցությունների սեղանի շուրջ:

Այնուհետեւ թերթը գրել է, որ այժմ այդ իշխանությունը չունի այն ուժը, որ ուներ 1995 թվականին: Ալիեւի իշխանությունը հինգ տարվա ընթացքում երբեք այսքան թույլ չէր եղել:

Հիմնադրվեց Հայաստանի ադամանդագործական ընկերությունը

ԵՐԵՎԱՆ, 10 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Կառավարության որոշմամբ հիմնադրվել է «Դայամոնդ Քոմփանի օֆ Արմենիան (Դի Սի Է3)» («Հայաստանի ադամանդագործական ընկերություն») պետական ՓԲԸ, որը զբաղեցնում է «Շողակն» ադամանդագործական ձեռնարկության տարածքի մի մասը: Ըստ արդյունաբերության եւ առեւտրի նախարարի գլխավոր խորհրդական Վարդան Վարդանյանի, այս ընկերության հիմնադրումը նպաստակ ունի ադամանդագործության ոլորտում իրականացնել պետական վերահսկողություն, կազմակերպել ուսուցման գործընթաց, ինչպես նաեւ օժանդակել մասնավոր ձեռնարկություններին՝ հումքի ձեռքբերման եւ վերամշակված ադամանդի իրացման գործում: Դի-Սի-Է3-ի տնօրեն է նշանակվել Գագիկ Սրբահամյանը, որը մինչ այդ «Շողակնի» տնօրենն էր:

Վ. Վարդանյանը նշեց նաեւ, որ նման ընկերության առկայությունը թույլ կտա պետությանը տեղյակ լինել այս ոլորտի ֆինանսական հոսքերին, շահույթներին եւ դրա օժանդակությամբ ստեղծել բազմաթիվ նոր ձեռնարկություններ: Ընկերությունը կաջակցի ադամանդագործության ոլորտում իր օժանդակությունն ակնկալող բոլոր ձեռնարկություններին, մասնավորապես, փոքր ձեռնարկություններին, որոնք սովորաբար առավել շահութաբեր են: Սկզբնական փուլում, Վարդան Վարդանյանի խոսքերով, ձեռնարկությունը կունենա նաեւ սեփական փոքր արտադրություն, որտեղ հիմնականում կիրականացվեն բարդ վերամշակումներ, հետագայում ստիպված նաբար դադարեցնելով արտադրական գործունեությունը, այն կմնա որպես ղեկավարող ընկերություն:

Վ. Վարդանյանը հայտնեց նաեւ, որ «Շողակն» ձեռնարկությունը կպահպանվի իր նախկին ձեւով եւ աշխատանքային տեղերով, եւ շուտով մրցույթ կհայտարարվի տնօրենի տեղի համար: Հետագայում նախատեսվում է այն բաժանել փոքր ձեռնարկությունների: «Է3 Դի Սի» պետական ՓԲԸ-ն համագործակցելու է միջազգային Դե Բիրս ֆիրմայի «Մոնաս» ընկերության հետ, որը կաղահովի հումքի եւ մասամբ նաեւ վերամշակված ադամանդի իրացումը Հայաստանի ադամանդագործության ոլորտում:

Պաշտոնական մեղադրանք Ռոխլինի կնոջը

ՄՈՍԿՎԱ, 10 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Գեներալ Ռոխլինի տիկնոջը՝ Տամարա Ռոխլինային պաշտոնական մեղադրանք է ներկայացվել ՌԴ Բեռնսկան օրենսգրքի առաջին մասի 105-րդ հոդվածի համաձայն՝ «կանխամտածված սպանության համար», այսօր ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ում կայացած մամլո ասուլիսում հայտարարել է ՌԴ գլխավոր դատախազության քննչական խմբի ղեկավարի տեղակալ Վլադիմիր Սոլովյովը: Սակայն Սահմանադրությունն (51-րդ հոդված) արգելում է օգտագործել «սեփական անձի, հարազատների ու մտերիմների դեմ վկայությունները»: Այդ պատճառով մեղադրանքը հիմնված չի լինի Տամարա Ռոխլինայի խոստովանության վրա:

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոտնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:
Զանգահարել՝ 27 22 57 ժամը 10-16. 58 33 26 ժամը 18-23

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Վաճառվում է 3 սենյականոց բնակարան՝ 5 հարկանի տեսքի 3-րդ հարկում, վերանորոգված, բարվոք վիճակում: Բակում ունի ցեմենտ-բետոնե մեծ ավտոտնակ:
Հասցեն՝ Զեյթուն, երիտասարդական 1-ին նրբանցք, 4-րդ տուն, բն. 19: Գինը՝ պայմանագրային:
Ցանկացողները զանգահարեն 25-80-56 համարով:

ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ
ֆիրմային եւ տեղական փոքր-կուլտերի երաշխիքային վերանորոգման պաստվերներ կանչով:
Հեռ.՝ 645634, ժ. 17-20-ը

ՎԱՃԱՌՎՈՒՄ է
կիսանկուղային տարածք 132,6 քմ ընդհանուր մակերեսով, վերանորոգված, ունի սանհանգույց:
Հասցեն՝ Նալբանդյան 29. Տեղեկությունների համար զանգահարել 57-16-16 հեռախոսահամարով:

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրքերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Ազգի Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արզումանյան 2 Գրանցման թիվ 65. Դասակ 69149. Պատվեր 861 Տպաքանակը՝ 3500 Ստորագրված է տպագրության՝ 10. 07. 1998 Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@